


ԵՕՁԵՄԱՐԻՆ ԷՄՔՐԻՒՎԱԼ
ԽԱՉԻ ՀԱՆԱԴԱՐԿ



Թարգմանեց՝
ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

Ê Ø ´ ² ¶ ð à ô Â ° ² Ü Î à Ô Ø Æ ò

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով Հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային Հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան զծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան Հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
Եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝

Ø ³ℬïáó ì ³Ñ¿ Ô ³½³ñ»³Ý

Հեղինակը

Սուրբ Եօզէմարիա Էսքրիվան ծնունդ է Բարբասթրոյում (Հուէսքա, Իսպանիա), 1902թ. Յունուարի 9ին: 15ից 16 տարեկան հասակում սկսում է նշմարել աստուածային կոչման առաջին նախազգացումները եւ որոշում է քահանայ դառնալ: 1918ին, Լոզերոնիոյի ձեմարանում սկսում է եկեղեցական ուսումները, իսկ 1920ից դրանք շարունակում է Սարագոցցայի «Փառլայի Սբ. Ֆրանչիսկոս» ձեմարանում, ուր 1922ից սկսած վարում է "Մեծաւորի" պաշտօն: 1923ին, եկեղեցական Մեծաւորների արտօնութեամբ, սկսում է իրաւաբանական ուսումները Սարագոցցայի Համալսարանում, առանց աստուածաբանական ուսումները դրանց պատճառով տկարացնելու: Սարկաւագ է ձեռնադրւում 1924թ. Դեկտեմբերի 20ին, իսկ քահանայ՝ 1925թ. Մարտի 28ին:

Քահանայական ծառայութիւնը սկսում է Փերդիգուէրայի ժողովրդապետութիւնում – Սարագոցցայի թեմ – շարունակելով ապա ինքնին Սարագոցցայում: 1927թ. գարնանը, ինչպէս միշտ՝ Արքեպիսկոպոսի արտօնութեամբ, տեղափոխւում է Մադրիդ, ուր նուիրւում է քահանայական անխոնջ աշխատանքի, բոլոր միջավայրերում, ծառայելով նաեւ արուարձանների աղքատներին ու հիւանդներին, յատկապէս հիւանդանոցներում գտնուող անբուժելիներին ու մահամերձներին: Դառնում է Սուրբ Սրտի Առաքելական Տիկնանց կազմակերպութեան կողմից հիմնուած Հիւանդախնամ Ընկերութեան մատուանապետ, եւ դասաւանդում է մի համալսարանական Կաճառում: Միաժամանակ շարունակում է Իրաւաբանութեան մէջ վարդապետական աստիճան ստանալու համար հարկաւոր ուսումներն ու դասընթացները, որոնք այդ ժամանակ կատարւում էին միայն Մադրիդի համալսարանում:

1928թ. Հոկտեմբերի 2ին Տէրը նրան յստակ կերպով ցոյց է տալիս այն՝ ինչ մինչ այդ նա միայն կանխազգացել էր: Եւ Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվան հիմնում է «Օպուս Դէյ»ը: Ինչպէս միշտ՝ Տիրոջ կողմից մղուած, 1930թ. Փետրուարի 14ին Օպուս Դէյի առաքելական գործունէութիւնը սկսում է կանանց հետ: Այդպիսով, Եկեղեցու գրկում բացւում էր մի նոր ճանապարհ, որի նպատակն է զարկ տալ, հասարակական բոլոր խաւերի անձանց մէջ, սրբութեան փնտռութիւն եւ առաքելական գործունէութեանը, շնորհիւ աշխատանքի սրբագործման, աշխարհի ներսում եւ առանց սեփական կեանքի վիճակը փոխելու:

Այդ 1928թ. Հոկտեմբերի 2ից սկսած, Օպուս Դէյի հիմնադիրը բոլոր հոգիների նկատմամբ առաքելական մեծ եռանդով նուիրւում է կատարելու առաքելութիւնը, որն Աստուած յանձնել էր իրեն: 1934ին նշանակւում է Սբ. Եղիսաբէթի անունը կրող Բարեգործական Հաստատութեան Տեսուչ: Իսպանիայի քաղաքացիական պատերազմի տարիներին իր քահանայական պաշտօնը վարում է նախ Մադրիդում – յաճախ իր կեանքը ծանրօրէն վտանգի ենթարկելով – իսկ յետոյ՝ Բուրգոսում: Արդէն այդ ժամանակ երկարատեւ ուժգին հակառակութիւններ է կրում, որոնց համբերում է հանդարտ սրտով եւ գերբնական ոգիով:

1943թ. Փետրուարի 14ին հիմնում է Սուրբ Խաչի քահանայական Ընկերութիւնը, որն անբաժանելիօրէն միացած է Օպուս Դէյին եւ, Օպուս Դէյի աշխարհական անդամներին քահանայական ձեռնադրութիւն ստանալու եւ նրանց թեմական պատկանելութիւնը Գործի ծառայութեանն ի նպաստ կատարելու հնարաւորութիւն ընձեռելուց բացի, աւելի ուշ հնարաւորութիւն էր տալու թեմական քահանաներին նոյնպէս մասնակցելու Օպուս Դէյի հոգեկանութեանն ու հոգեւոր կեանքի գործնական հրահանգումների համակարգին, իրենց քահանայական կեանքի պարտաւորութիւնների կատարման մէջ փնտռելով սրբութիւնը, թեմական Առաջնորդի բացարձակ իրաւասութեան ներքոյ մնալով հանդերձ:

1946ին տեղափոխվում է Հռոմ, ուր հաստատվում է մինչև իր կեանքի վերջը: Հռոմից խթանում եւ ղեկավարում է Օպուս Դէյի տարածումն ամբողջ աշխարհով մէկ, գործի դնելով իր բոլոր ուժերը՝ Գործին անդամակցած արանց եւ կանանց տալու համար ուսմունքային, հոգեւոր եւ առաքելական հաստատահիմն կրթութիւն: Հիմնադրի մահուան պահին, Օպուս Դէյը հաշւում էր 80 ազգութիւնների պատկանող աւելի քան 60.000 անդամներ:

Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվան եղել է Եկեղեցական Կանոնադրքի վաւերական Մեկնաբանութեան Քահանայապետական Յանձնաժողովի եւ Կղերանոցների ու Համալսարանների Սուրբ Ժողովի Խորհրդական, Սրբազան Քահանայապետի Պատուոյ Առաջնորդ եւ Հռոմէական աստուածաբանական Քահանայապետական Կաճառի պատուաւոր անդամ, ինչպէս նաեւ՝ Նաւարրայի (Իսպանիա) եւ Փիուրայի (Պեռու) Համալսարանների Աւագ Դիւանապետ:

Սբ. Եօզէմարիա Էսքրիվան մահացել է 1975թ. Յունիսի 26ին: Երկար տարիներ արդէն նուիրում էր իր կեանքը Եկեղեցու եւ Քահանայապետի համար: Թաղուած է Հռոմում, Խաղաղութեան Տիրամայր եկեղեցու գետնափոր Դամբարանում: Օպուս Դէյի առաջնորդութեան գործում նրան յաջորդեց Հոգեշնորհ Ալվարոյ Դէլ Փորթիլլոն (1914-1994), որը, երկար տարիներ շարունակ Սբ. Եօզէմարիա Էսքրիվայի ամենասերտ գործակիցը լինելուց յետոյ, միաձայն ընտրուեց 1975թ. Սեպտեմբերի 15ին: Ներկայումս Օպուս Դէյի առաջնորդն է Հոգեշնորհ Խաւիէր Էչէվարրիան: Նա նոյնպէս տասնեակ տարիներ աշխատել է Սբ. Եօզէմարիայի եւ նրա առաջին յաջորդի՝ Հոգեշնորհ Ալվարոյ Դէլ Փորթիլլոյի հետ: Օպուս Դէյը – որ սկզբից եւեթ ստացել էր թեմական Իշխանութիւնների արտօնութիւնը, իսկ 1943ին «*appositio manus*» արտօնագիրը, եւ ապա՝ Սուրբ Աթոռի կողմից վաւերացումը – Սրբազան Քահանայապետ Յովհաննէս Պօղոս Բ-ի կողմից 1982թ. Նոյեմբերի 28ին հաստատուեց որպէս Անձնական Առաջնորդութիւն: Կանոնական այս կերպն ու սահմանումն էր նախատեսել եւ փափաքել Սուրբ Եօզէմարիան:

Սրբութեան համբաւը, որն իր կեանքի ընթացքում արդէն ունէր, իր մահից յետոյ տարածուեց երկրագնդի բոլոր անկիւններով մէկ, ինչպէս ցոյց են տալիս հոգեւոր եւ նիւթական շնորհների բազմաթիւ վկայութիւնները, որոնց ընդունումը վերագրւում է Օպուս Դէյի հիմնադրի միջնորդութեանը. դրանց շարքին գրանցուած են նաեւ բժշկումներ, որոնք գիտականօրէն անբացատրելի են: Բազմաքանակ են եղել նաեւ հինգ մայրցամաքներից ստացուած նամակները, որոնց շարքին նաեւ նամակները 69 ծիրանաւորների եւ մօտ 1.300 եպիսկոպոսների – որ կազմում է կաթողիկէ աշխարհի եպիսկոպոսների մէկ երրորդից աւելին – որոնցով Քահանայապետից խնդրւում էին սկսել Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի Երանացման եւ Սրբադասման Դատաւարական Ընթացքը: Սրբադասումների Դատաւարական Ժողովը գործի բացման արտօնագիրը տուեց 1981թ. Յունուարի 30ին, իսկ Յովհաննէս Պօղոս Բ-ը այն վաւերացրեց 1981թ. Փետրուարի 5ին:

1981 եւ 1986թթ. միջեւ տեղի ունեցան ճանաչողական երկու դատաւարութիւններ, Հռոմում եւ Մադրիդում, քննելու համար Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի կեանքն ու առաքինութիւնները: Այս երկու դատաւարութիւնների արդիւնքներին ծանօթանալով եւ ընդունելով խորհրդատու աստուածաբանների Համաժողովի եւ Սրբադասումների Դատաւարական Ժողովի անդամ ծիրանաւորների ու եպիսկոպոսների Յանձնաժողովի նպաստաւոր կարծիքները, 1990թ. Ապրիլի 9ին Սրբազան Քահանայապետը յայտարարեց Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի առաքինութիւնների հերոսականութեան մասին, որով նա ստացաւ Երանաշնորհի տիտղոս: 1991թ. Յուլիսի 6ին Սրբազան Քահանայապետը

հրամայեց հրապարակել Վճռագիրը, ուր յայտարարում էր հրաշագործ բնույթը մի բժշկումի, որը կատարուել էր Երանաշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի բարեխօսութեամբ. այդ Վճռագրով եզրափակուեցին կանոնական գործընթացները, որոնք անհրաժեշտ էին Օպուս Դէյի հիմնադրի Երանացման համար, ինչը որ տեղի ունեցաւ 1992թ. Մայիսի 17ին, Սուրբ Պետրոսի հրապարակում կատարուած հանդիսաւոր ծիսակատարութեան ընթացքում, որին նախագահում էր Սրբազան Քահանայապետ Յովհաննէս Պօղոս Բ.ը: 1992թ. Մայիսի 21ից Սբ. Եօզէմարիա Էսքրիվայի մարմինը հանգչում է Խաղաղութեան Տիրամայր առաջնորդական եկեղեցու խորանի ներքոյ, Օպուս Դէյի Առաջնորդութեան գլխաւոր կենտրոնում, տեւական կերպով ստանալով աղօթքի ու երախտագիտութեան ընկերակցութիւնը ամբողջ աշխարհով մէկ սփռուած բազմաթիւ անձանց, որոնք Աստծուն մօտեցել են Օպուս Դէյի հիմնադրի օրինակից եւ ուսուցումներից, ինչպէս նաեւ նրա բարեխօսութեանը դիմողների բարեպաշտութիւնից գրաւուած:

2001թ. Դեկտեմբերի 20ին, Յովհաննէս Պօղոս Բ. Սրբազան Քահանայապետը վաւերացրեց Սրբադասութեան Դատաւարական Ժողովի վճռագրերից մէկը, որը վերաբերում էր Երանելի Եօզէմարիայի բարեխօսութեամբ կատարուած հրաշքներից մէկին: 2002թ. Փետրուարի 26ին, եկեղեցական համագումարի հաւաքուած Ծիրանաւորների, Արքեպիսկոպոսների ու Եպիսկոպոսների կարծիքը ունկնդրելուց յետոյ, Սրբազան Քահանայապետը սրբադասեց Երանելի Եօզէմարիա Էսքրիվային. ծիսական արարողութիւնը տեղի ունեցաւ Հռոմում, Սուրբ Պետրոսի հրապարակում, 2002թ. Հոկտեմբերի 6ին:

Սուրբ Եօզէմարիա Էսքրիվայի գրչին են պատկանում, աստուածաբանական-կանոնական բնույթ ունեցող «Հուէլգասի Աբբայուհին» մենագիր քննական ուսումնասիրութիւնից բացի, հոգեկանութեան մի շարք գրքեր, որոնք թարգմանուել են բազմաթիւ լեզուների. «Ծանապարհ», «Սուրբ Վարդարանը», «Յիսուսն է անցնում», «Աստծոյ ընկերներ», «Խաչի Ծանապարհ», «Եկեղեցին, մեր Մայրը», «Ակօս», «Հնոց», որոնցից վերջին հինգը հրատարակուել են յետ մահու: Միջազգային լրատուամիջոցներին տրուած հարցազրոյցների շարքը ծնունդ է տուել «Զրոյցներ Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի հետ» հատորին:

Ն ա ի ա ր ա ն

«Խաչեալ Քրիստոսի վերջերում ապաստանիր»¹: Երբ առաջադրում էր այս ուղին, բոլոր նրանց՝ ովքեր իրենից խորհուրդ էին հարցնում իրենց ներանձնական կեանքը խորացնելու համար, Երանաշնորհ Եօզեմարիա Էսքրիվան պարզապէս հաղորդում էր իր անձնական փորձառութիւնը, մատնանշելով այն համառօտ ուղին, որով ինքն իսկ ընթացել էր իր երկրային ուղեւորութեան ամբողջ ընթացքում, եւ որն իրեն առաջնորդել էր մինչեւ հոգեկանութեան ամենաբարձր գագաթները: Յիսուսի հանդէպ տածուած իր սէրը միշտ եղել է տեսանելի ու շօշափելի, ուժգին, գորովալի, որդիական, յուզիչ:

«Օպուս Դէյ»ի Հիմնադիրը սովոր էր հաստատել, տպաւորիչ համոզումով, որ քրիստոնէական կեանքը կայանում է «Քրիստոսին հետեւելու ծէգ. սա՛ է գաղտնիքը»: Եւ յաւելում էր. «Ուղեկցել Նրան այնքա՛ն ծօրհկից, որ հասնենք Նրա հետ ապրելու աստիճանի, ինչպէս առաջին փասնէրկուսը. այնքա՛ն ծօրհկից, որ կարողանանք Նրա հետ նոյնանալ»²: Այս պատճառով է, որ խորհուրդ էր տալիս տեւական կերպով խորհրդածել Աւետարանի պարունակութեան շուրջ, եւ ով բախտաւորութիւնն է ունեցել ունկնդրելու՝ թէ նա ինչպէս էր մեկնաբանում Քրիստոսի կեանքի դրուագներից ոմանք, դրանք լսել է որպէս կենսալի, արդիական, եւ սովորել է այդ տեսարանների մէջ մտնել որպէս դերակատարներից ծէկը:

Աւետարանական բոլոր պատմութիւնների շարքին, Երանաշնորհ Եօզեմարիա Էսքրիվան իւրայատուկ հոգատար խնամքով ու սիրով կանգ էր առնում Յիսուսի Մահուան եւ Յարութեան դէպքերի վրայ: Նրանցում, բազմաթիւ ուրիշ խորհրդածութիւնների շարքին, իր հայեցողութիւնն ուղղում էր Քրիստոսի Սրբազնասուրբ Մարդկութեան վրայ, որը – մեզինից իւրաքանչիւրին մերձենալու իր բաղձանքի մէջ – մեր առաջ յայտնում է մարդկային ամբողջ տկարութեամբ եւ աստուածային ամբողջ մեծվայելչութեամբ: «Այս իսկ պարճառով», ասում էր, «Ծիշք խորհուրդ եմ Կուէլ ընթերցել լաւ գրքեր, որ պարծնում են Յիսուս Զարչարանքները: Այդպիսի գրութիւնները, անկեղծ բարեպաշտութեամբ լի, ծէգ օգնում են ծփոթել Աստուծոյ Որդու ծախն, որ ծարդ էր ծեր նման եւ ճշմարիտ Աստուծո, որ սիրում է եւ Իր ծարձնում փառապանքներ է կրում աշխարհի փրկութեան համար»³: Իրօք, քրիստոնեան հասունանում ու ամրապնդւում է Խաչի կողքին, ուր հանդիպում է նաեւ Մարիամին, իր Մօրը:

Որպէս Գողգոթայի դրուագների շուրջ իր հայեցողութեան արդիւնք, «Օպուս Դէյ»ի Հիմնադիրը պատրաստել է այս Խաչի Ճանապարհը: Իր փափաքն էր, որ իբրեւ օգնութիւն ծառայէր Յիսուսի Զարչարանքների շուրջ խորհրդածելու համար, բայց երբեք չկամեցաւ այն որեւէ մէկին պարտադրել որպէս հիմք այս այսքա՛ն քրիստոնէական բարեպաշտութեան կիրարկման համար: Զկամեցաւ պարտադրել, որովհետեւ մեծ սէր էր տածում խղճի ազատութեան նկատմամբ եւ խոր յարգանք էր սնուցում իւրաքանչիւր հոգու ներանձնական կեանքի հանդէպ, այն աստիճան, որ իր որդիներին անգամ չմղեց որդեգրելու բարեպաշտական կեանքի որոշակի ուղղութիւններ, բացառութեամբ,

¹ Ժանապարհ, 288.

² Աստուծոյ ընկերներ, 299.

³ Աստուծոյ ընկերներ, 299.

բնականաբար, նրանց՝ որոնք էական մասն են կազմում այն հոգեկանություններն, որն Աստուած կամեցել է «Օպուս Դէյ»ի համար:

Երանաշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի յետ մահու լոյս տեսնող այս նոր երկը նախորդների նման պատրաստուել է օգնելու համար հայեցողական աղօթքին եւ, Աստծոյ շնորհով, զղջման հոգու մէջ աճին — զղջում, որ սիրոյ վիշտն է — եւ Տիրոջ հանգէպ երախտագիտութեանը, որ փրկեց մեզ Իր արեան գնով¹: Սոյն նպատակով, որպէս խորհրդածութեան կէտեր ներառնուել են Երանաշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի խօսքերից հատուածներ, քաղուած՝ նրա քարոզներից, զրոյցներից, նրա բաղձանքից՝ խօսելու միմիայն Աստծոյ եւ Աստծուց բացի ուրիշ ոչ մի բանի մասին:

Խաչի Ծանապարհը տխուր բարեպաշտութիւն չէ: Երանաշնորհ Եօզէմարիա Էսքրիվան յաճախակի էր ուսուցանում, որ քրիստոնէական բերկրանքի արմատները խաչակերպ են: Այո՛, Քրիստոսի Խաչելութիւնը չարչարանքի տառապագին ճանապարհ է, բայց միաժամանակ՝ յոյսի եւ ապահով յաղթանակի ճանապարհն է: Ինչպէս ինքն էր բացատրում իր քարոզներից մէկում. «Խորհիր, որ Աստուած քեզ ուզուծ է գոհունակ փեսնել եւ որ, եթէ դու քո կողմից անես հնարաւոր ամէն ինչ, երգանիկ կը լինես, շա՛ր երգանիկ, երգանկագո՛յն, թէեւ ոչ մի պահ չի պակասի Խաչը: Բայց Խաչն այլեւս կառափնափեղի չէ, Գահն է, որի վրայ բազմած՝ Քրիստոս թագաւորում է: Եւ, կողքին, ներկայ է նաեւ Իր Մայրը, որ նաեւ մեր Մայրն է: Ամենասրբուհի Կոյսը քո համար կը սրանայ զօրութեան շնորհը, որի կարիքն ունեն՝ իր Որդու հեգքերի վրայով վճռակամութեամբ ընթանալու համար»²:

Ալվարոյ Դէլ Փորթիլլոյ

Հոռմ, 1980 թ. Սեպտ. 14ին,
Սուրբ Խաչվերացի տօնի օրը

¹ Հմմտ. 1 Պա 18-19.

² Աստծոյ ընկերներ, 141.

ԽԱՉԻ ՃԱՆԱՊԱՐՀ

Տէր իմ եւ Աստուած իմ,
մեր Մօր սիրալիր հայեացքի ներքոյ
յօժարութեամբ պատրաստուում ենք ուղեկցելու Քեզ
վշտակրութեան ճանապարհի երկայնքին,
որն եղաւ մեր փրկագնումի գինը:
Կամենում ենք կրել այն ամէնը՝ որ Դու կրեցիր,
կամենում ենք ընծայել Քեզ մեր թշուառ սիրտը,
զղջացած,
որովհետեւ անմեղ ես
եւ մահուան ես պատրաստուում մեր համար,
մեր՝ որ միակ մեղաւորներն ենք:

Մայր իմ, վշտակիր Տիրամայր,
օգնիր ինձ վերապրելու այն դառն ժամերը,
որոնք Որդիդ կամեցաւ ապրել երկրի վրայ,
որպէսզի մենք, որ ստեղծուած ենք մի բոլոր հողով,
ի վերջոյ ապրէինք
Աստծոյ որդիների ազատութեան եւ փառքի մէջ:

ԱՌԱՋԻՆ ԿԱՅԱՆ



ՅԻՍՈՒՍ ԴԱՏԱՊԱՐՏԻՈՒՄ Է ՄԱՀՈՒԱՆ

Առաւօտեան ժամը տասն անց է արդէն: Դատավարութիւնը հասնում է աւարտին: Վճռորոշ փաստեր չկային: Դատաւորը գիտէ, որ թշնամիները Նրան յանձնել են նախանձից մղուած, եւ պատասխանատուութիւնից խուսափելու անհետեւ ռզի է փորձում. ընտրութիւնը Բարաբբայի, սպանութեամբ ծանրացած գողութեան համար մեղադրուած չարագործի, եւ Յիսուսի միջեւ, որին անուանում էին Քրիստոս: Ամբոխն ընտրում է Բարաբբային: Պիղատոսը բացականչում է.

«Իսկ ինչպէ՞ս վարուե՞մ, ուրե՞մն, Յիսուսի հետ» (Մտթ 27, 22):

Բոլորը պատասխանում են. «Թող խաչուի՛»:

Դատաւորը պնդում է. «Բայց ի՞նչ չարիք է գործել»:

Կրկին պատասխանում են գոռալով. «Թող խաչուի՛: Թող խաչուի՛»:

Պիղատոսը զարհուրում է աճող խռովքի դիմաց: Զուր է բերել տալիս եւ ամբոխի առաջ ձեռքերը լուանում է, ասելով.

«Ես անպարտ եմ այս արդարի արեւն հաճար: Դո՛ւք գիտէք» (Մտթ 27, 24):

Եւ Յիսուսին մտրակել տալուց յետոյ, Նրան յանձնում է, որպէսզի խաչուի: Լռութիւն է տարածւում այդ կատաղած ու դիւահար կոկորդններում: Կարծես Աստուած արդէն յաղթուած լինէր:

Յիսուս միայնակ է: Հեռու են այն օրերը, երբ Մարդ-Աստծոյ խօսքը լոյս եւ յոյս էր արծարծում սրտերում. հիւանդները երկարածիգ շարքերով գալիս էին բժշկուելու. Երուսաղէմի յաղթական աղաղակները, երբ Տէրը հասել էր մի հեզ իշուկի վրայ հեծած: Ա՛հ, եթէ մարդիկ կամենային տարբեր ընթացք տալ Աստծոյ սիրոյն: Եթէ դու եւ ես ճանաչած լինէինք Տիրոջ օրը:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐ

1. Յիսուս ձեռնհասների պարտեզում աղօթում է. «Յայր իմ» (Մտթ 26, 39), «Աբբա, Յայր» (Մրկ 14, 36): Աստուած իմ Հայրն է, նոյնիսկ եթէ տառապանքներ է ուղարկում ինձ: Սիրում է ինձ քնքշութեամբ, նոյնիսկ եթէ հարուածում է ինձ: Յիսուս տառապում է, կատարելու համար Հօր Կամքը ... : Իսկ ես, որ իմ հերթին կամենում եմ կատարել Աստծոյ ամենասուրբ Կամքը, հետեւելով Վարդապետի հետքերին, կարո՞ղ եմ դժգոհել, եթէ ճանապարհիս որպէս ուղեկից եմ գտնում տառապանքը:

Դա կը լինի իմ որդեգրութեան անսխալ նշանը, քանի որ Նա իմ հետ վարւում է ինչպէս Իր աստուածային Որդու հետ: Եւ, ուրեմն, Նրա նման, կարող եմ հեծեծալ եւ լալ իմ Գեթսեմանիում միայնակ, բայց, գետնին տապալուած, ոչնչութիւնս խոստովանելով, մինչեւ Տիրոջ գահը կը բարձրանայ հոգուս խորքից բխած աղաղակը. «Յայր իմ, Աբբա, Յայր, ... եղիցի՛»:

2. Զերբակալութիւնը. « ... Եկն ժամ, եւ ահա Տադնի Որդի Տարդոյ 'ի ձեռս Տեղաւորաց» (Մրկ 14, 41): ... Ուրեմն, մեղաւոր մարդն իր ժա՞մն ունի: Այո՛, իսկ Աստուած Իր յաւիտենութիւնը: ...

Յիսուսի կապանքնե՛ր: Կապանքներ, որոնցով Նա կամովին արտօնեց շղթայել Իրեն, կապէ՛ք ինձ, ուղում եմ տառապել Տիրոջս հետ, որպէսզի այս մահկանացու մարմինը խոնարհուի ... : Քանի որ — միջին ճանապարհ չկայ — կա՛մ ես պէտք է խոնարհեցնեմ նրան, կա՛մ ինքը կ'անասնացնի ինձ: Նախընտրում եմ իմ Աստծոյ ստրուկը լինել, քան ստրուկը իմ մարմնի:

3. Այդ կեղծ ու ձեւական դատավարութեան ընթացքում Տէրը լռում էր: «Եւ Յիսուս լռեալ կայր» (Մտթ 26, 63): Ապա, պատասխանում է Կայիափայի եւ Պիղատոսի հարցերին ... : Հերովդէսի հետ, որ թեթեւամիտ էր ու անմաքուր, եւ ոչ իսկ մէկ խօսք (հմմտ. Ղկա 23, 9). ցանկամոլութեան մեղքը այն աստիճան է այլասերում ու ապականում մարդուն, որ Հերովդէսը չի լսում եւ ոչ իսկ Փրկչի ձայնը:

Եթէ բազմաթիւ միջավայրերում ընդգիմանում են ճշմարտութեանը, լռի՛ր եւ աղօթի՛ր, խոնարհուի՛ր ... եւ յուսա՛: Ամենակործանուած թուացող հոգիներում նոյնպէս մնում է — մինչեւ վերջ — Աստծոյ սիրոյն վերադառնալու կարողութիւնը:

4. Ուր որ է արտասանուելու է դատավճիռը: Պիղատոսը ծաղրանքի ձայներանգով ասում է. «Ահա թագաւորդ ձեր yնէզ» (Յվհ 19, 14): Քահանայապետները կատաղի մոլեգնութեամբ պատասխանում են. «Մենք ա՛յլ թագաւոր չունենք, Կայսրից բացի» (Յվհ 19, 15):

Տէ՛ր, ո՞ր եւ Քո մտերիմները: Ո՞ր եւ Քո հպատակները: Լքել եւ Քեզ: Ուղեկորոյս վիճակ, որ տեւում է քսան դար շարունակ ... : Ամէն ոք խուսափում է Խաչից, Քո Սուրբ Խաչից:

Արիւն, անձկութիւն, միայնութիւն եւ հոգիների անյազ քաղց ... սրանք են արքայութեանդ չքախումբը:

5. «Ահա ծարդը» (Յվհ 19, 5): Մարդու սիրտը յուզւում է, Տիրոջ Սրբազնասուրբ Մարդկութիւնը ամբողջովին վերքերով պատուած տեսնելով:

«Իսկ եթէ Նրան հարցնեն. "Ի՞նչ են ձեռքերիդ ծիգի այդ վերքերը", Նա կը պատասխանի. "Սրանք իմ ծպտիծների քանն են սրացել"» (Զքր 13, 6):

Նայի՛ր Յիսուսին: Իւրաքանչիւր պատուածք մի յանդիմանութիւն է: Մտրակի իւրաքանչիւր հարուած վշտի պատճառ է, քո մեղքերի համար եւ իմ մեղքերի:

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՅԱՆ



ՅԻՍՈՒՍ ԻՐ ՈՒՍԻՆ Է ՎԵՐՅՆՈՒՄ ԽԱՉԸ

Քաղաքից դուրս, Երուսաղէմից դէպի Հիւսիս-արեւմուտք, մի փոքրիկ բլուր կայ. արամայերէն կոչւում է Գողգոթա, իսկ լատիներէն՝ «Locus Calvariae», այսինքն՝ Գանգերի Վայր:

Յիսուս առանց ընդդիմութիւն ցուցաբերելու յանձնւում է դատավճռի գործադրմանը: Ոչ մի չարչարանք Նրան չի խնայւում, եւ Նրա ուսերին ընկնում է անարգ ու վարկաբեկիչ խաչի ծանրութիւնը: Բայց խաչը դառնալու է, սիրոյ ներգործութեամբ, Նրա արքայութեան գահը:

Երուսաղէմի բնակիչները եւ Զատիկի տօնին մասնակցելու եկած զբոսիչները խռնւում են քաղաքի փողոցներում, տեսնելու համար Յիսուս Նազովրեցուն՝ հրեաների Թագաւորի անցնելը: Աղաղակների ժխոր է տիրում, եւ, մերթ ընդ մերթ, կարճատեւ լռութիւններ. թերեւս երբ Քրիստոս հայեացքը սեւեռում է ինչ որ մէկի վրայ.

«Եթէ ձեզնից ծէկը կա՞ծէնու՞ծ է հեփտէնէլ ինձ, թող վերցնի իր ածէն օրուայ խաչը եւ ի՞մ եփտէից գայ» (Հմմտ. Մտթ 16, 24):

Որքա՛ն սիրով է Յիսուս փարւում խաչափայտին, որն Իրեն մահ է պարգեւելու: Մի՞թէ ճիշտ չէ, որ հազիւ դադարում ես վախենալ խաչից, այն ամէնից՝ ինչին մարդիկ խաչ անունն են տալիս, երբ գործի ես դնում աստուածային Կամքն ընդունելու քո կամքը, երջանիկ ես, եւ անէանում են քո բոլոր մտահոգութիւնները, Ֆիզիքական կամ հոգեմտաւոր տառապանքները:

Իսկապէս թեթեւ ու սիրելի է Յիսուսի խաչը: Նրանում հաշուի չեն առնւում ցաւերը, այլ միմիայն ուրախութիւնը, որ ծնւում է Նրա հետ փրկագործութեանը մասնակցելու գիտակցութիւնից:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐ

1. Ճանապարհ ընկնող խումբը պատրաստում է: ... Յիսուս, ծաղրանքի ենթարկված, Իր շուրջը գտնուողների հեզնանքի թիրախն է: Ճիշտ Ինքը, որ երկրի վրայ ընթացաւ բարիք գործելով եւ բոլորի հիւանդութիւնները բուժելով (Հմմտ. Գրծ 10, 38):

Կառափնատեղի են տանում Նրան, Բարի Վարդապետին, Յիսուսին, որն ընդառաջ եկաւ մեզ, մեզ՝ որ հեռացած էինք:

2. Կարծես տօնակատարութիւն լինի, շքախումբ են պատրաստել, մի երկարածիգ թափօր: Դատաւորները կամենում են վայելքով ճաշակել իրենց յաղթանակը, դանդաղ ու անողորմ մահապատիժ կիրառելով:

Յիսուս մահը չի գտնելու մի ակնթարթում ... : Նրան ժամանակ է տրւում, որպէսզի տառապանքն ու սէրը շարունակեն նոյնանալ Հօր սիրալիր Կամքի հետ: «Առնել զկամս Բո, Աստուած իմ, կամեցայ, եւ զօրէնս Բո՝ ի մէջ որովայնի իմոյ» (Սղմ 39, 9). Քո կամքը կատարելու մէջ եմ գտնում, ո՛վ Աստուած իմ, իմ ամբողջ բարեհաճութիւնը, եւ Քո օրէնքը իմ սրտի խորքում է:

3. Որքան աւելի լինես Քրիստոսինը, այնքան աւելի շնորհ կը ստանաս՝ երկրի վրայ արդիւնաւէտութեանդ համար եւ յաւիտենական երանութեանդ:

Բայց պէտք է վճռակամօրէն ընտրես՝ հետեւելու նուիրումի ճանապարհին. ինչը ուսերիդ, ժպիտը շուրթերիդ, լոյսը հոգուդ մէջ:

4. Քո ներսում լսում ես. «Որքա՛ն ծանր է լուծը, որ ազատակամ յանձն ես առել»: ... Սատանայի ձայնն է, լուծը ... քո հպարտութեան:

Տիրոջից խոնարհութիւն խնդրիր, եւ դու նոյնպէս կը հասկանաս Յիսուսի այս խօսքերը. «Լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ փոքրոգի» (Մտթ 11, 30), որոնք ինձ հաճելի է ազատօրէն թարգմանել այս կերպ. Իմ լուծը ազատութիւնն է, Իմ լուծը սէրն է, Իմ լուծը միութիւնն է, Իմ լուծը կեանքն է, Իմ լուծը արդիւնաւէտութիւնն է:

5. Մարդկանց մէջ մի տեսակ վախ կայ ինչից, Տիրոջ ինչից: Փաստացի պատճառն այն է, որ սկսել են խաչ անուանել այն բոլոր տհաճ բաները, որոնք պատահում են կեանքում, եւ կորցրել են դրանք Աստծոյ որդիների զգացողութեամբ, գերբնական տեսութեամբ կրելու ունակութիւնը: Մինչեւ իսկ հանում են մեր նախնիների կողմից ճանապարհների եզրերին կանգնեցուած խաչերը ... :

Յիսուսի ինչեղութեամբ, ինչը դադարեց պատժի խորհրդանշան լինելուց եւ դարձաւ յաղթանակի նշան: Ինչը մեր Փրկչի զինանշանն է. նրանում է մեր փրկութիւնը, մեր կեանքը, մեր յարութիւնը:

ԵՐՐՈՐԴ ԿԱՅԱՆ



ՅԻՍՈՒՍ ԸՆԿՆՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

Խաչը վէրքեր է բացում, իր ծանրութեամբ պատռտում է Տիրոջ ուսերը:

Ամբոխն ավելի բազմամարդ է դարձել: Լեզիոնականները հազիւ են կարողանում զսպել խռովուած, գազազած ամբոխին, որն հունից դուրս ելած գետի նման հաւաքւում է Երուսաղէմի նեղ փողոցներում:

Յիսուսի ուժասպառ մարմինն այլեւս երերում է հսկայ Խաչի ծանրութեան ներքոյ: Սիրով գերառատօրէն լի Իր Սրտից կեանքի հազիւ մի շունչ է հասնում Իր խոցոտուած անդամներին:

Իր աջ ու ձախ կողմերում Տէրը տեսնում է այս ամբոխը, որ թափառում է առանց հովուի մնացած հօտի նման: Կարող էր կանչել նրանց մէկ առ մէկ, իւրաքանչիւրին իր անունով, իւրաքանչիւրիս մեր անունով: Այնտեղ ամբոխի մէջ էին ոմանք նրանցից՝ ովքեր կերակրուել էին հացի ու ձկան բազմացման ժամանակ, ովքեր բժշկուել էին իրենց հիւանդութիւններից, ովքեր ունկնդրել էին Նրա ուսուցումները լճի ափին, լեռան լանջին եւ Տաճարի սրահներում:

Մի սուր ու կսկծալի վիշտ է անցնում Յիսուսի հոգու միջով, եւ Տէրն ուժասպառ գետին է ընկնում:

Դու եւ ես ոչինչ չենք կարող ասել. այլեւս գիտենք, թէ Յիսուսի Խաչն ինչու է այդքան ծանր: Ողբանք մեր թշուառութիւնները, ինչպէս նաեւ մարդկային սրտի սոսկալի ապերախտութիւնը: Մեր հոգու խորքից թող բխի ճշմարիտ զղջման մի ալիք, որ մեզ դուրս հանի մեղքի առաջացրած ուժասպառումից: Յիսուս ընկաւ, որպէսզի մենք կրկին ոտքի կանգնենք. մէկ անգամ եւ ընդմիշտ:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐ

1. Տխրո՞ւր ես: ... Որովհետեւ այդ ընդհարման մէջ ես ընկել:
Ո՛չ, ուրախացիր: Որովհետեւ յաջորդ անգամ, Աստծոյ շնորհով եւ քո այս պահի խոնարհեցմամբ, կը յաղթես:
2. Քանի դեռ պայքար կայ, ճգնողական պայքար, կայ հոգեւոր կեանք: Տէրը մեզնից ճիշտ սա է ակնկալում. Իրեն գործերով սիրելու կամք, ամէնօրեայ փոքրիկ իրողութիւններում:
Եթէ փոքրի մէջ յաղթական ես, յաղթական կը լինես նաեւ մեծի մէջ:
3. «Այս մարդը մահանում է: Այլեւս ոչինչ չենք կարող անել ... »:
Սա պատահեց տարիներ առաջ, Մադրիդի հիւանդանոցներից մէկում:
Խոստովանանքից յետոյ, երբ քահանան իր խաչը նրան մօտեցրեց համբուրելու, այդ գնչուն սկսեց բարձր ձայնով գոչել, այն աստիճան, որ չէին կարողանում հանդարտեցնել.
«Իմ այս պիղծ շուրթերով չեմ կարող համբուրել Տիրոջը»:
«Բայց չէ՞ որ մօտ ես նրա հետ պինդ գրկախառնուելու եւ համբուրելու, մի քանի րոպէից, Երկնքում»:
... Երբեւէ տեսե՞լ ես գղջումն արտայայտելու սահմուկելիօրէն աւելի գեղեցիկ կերպ ու միջոց:
4. Խօսում ես, իսկ քեզ չեն լսում: Իսկ եթէ լսում են, չեն հասկանում: Չհասկացուած ու չգնահատուած մէկն ես: ... Լա՛ւ: Յամենայն դէպս, որպէսզի քո խաչն ունենայ Քրիստոսի Խաչի ամբողջ տարողութիւնը, հարկաւոր է՝ որ դու այժմ գործես այսպէս, առանց ի նկատի առնուելու: Ուրիշներ կը հասկանան քեզ:
5. Որքա՛ն բազմաթիւ մարդիկ, հպարտութեամբ ու սին երեւակայութեամբ, գողգոթաներ են մագլցում, որոնք Քրիստոսին չեն:
Խաչը, որ պէտք է կրես, աստուածային է: Մի՛ կամեցիր որեւէ մարդկային խաչ կրել: Իսկ եթէ յանկարծ ընկնես այս որոգայթի մէջ, իսկոյն ուղղիւ իրավիճակը. քեզ բաւական կը լինի մտածելը, որ Նա, մեր սիրոյ համար, անսահմանօրէն աւելին է կրել ու տառապել:

ՉՈՐՐՈՐԴ ԿԱՅԱՆ



ՅԻՍՈՒՍ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է
ՄԱՐԻԱՄԻՆ,
ԻՐ ԱՄԵՆԱՍՐԲՈՒՀԻ ՄՕՐԸ

Յիսուս զեռ նոր է ոտքի կանգնել իր առաջին անկումից, երբ հանդիպում է իր Ամենասրբունհի Մօրը, իր անցած ճանապարհի եզերքին:

Մարիամն անպարփակ սիրով նայում է Յիսուսին, եւ Յիսուս նայում է իր Մօրը: Նրանց հայեացքներն հանդիպում են, երկու սրտերից իւրաքանչիւրը միւսի մէջ է հեղում իր վիշտը: Մարիամի հոգին ընկղմուած է դառնութեան մէջ, Յիսուսի դառնութեան մէջ:

«Դուք բռնորդ, որ անցնում էք ճանապարհով, ուշադրութիւն դարձրէք, նայէք եւ փնտէր. կա՞յ արդեօք ի՞մ վշտի նժան վիշտ» (Ողբ 1, 12):

Բայց ոչ ոք չի անդրադառնում, նրան ոչ ոք չի նկատում. այլ միայն Յիսուս:

Կատարւում է Սիմէոնի մարգարէութիւնը. «Մի սուր խոցելու է հոգիդ» (Ղկս 2, 35):

Չարչարանքների խաւար միայնութեան մէջ, Աստուածածինն իր Որդուն ընծայում է գորովի, միութեան, հաւատարմութեան բալասանը. մի «այո՛» աստուածային Կամքին:

Մարիամի ձեռքը բռնելով, դու եւ ես նոյնպէս կամենանք մխիթարել Յիսուսին, միշտ եւ ամէն հարցում ընդունելով իր Հօր, մեր Հօր Կամքը:

Միմիայն այսպէս կը ճաշակենք Քրիստոսի Խաչի քաղցրութիւնը, եւ նրան կը փարուենք Սիրոյ գօրութեամբ, երկրագնդի բոլոր ճանապարհներով մէկ յաղթական պանծանքով կրելով այն:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐ

1. Ո՞վ կարող էր արցունքները զսպել, Քրիստոսի Մօրն այսպիսի ծանր վշտակրութեան մէջ տեսնելով:

Իր Որդին չարհրկուած, ... իսկ մենք հեռու, վախկոտների նման, դիմադրելով ու ընդդիմանալով աստուածային Կամքին:

Մայր իմ եւ Տիրուհի, սովորեցրու ինձ արտասանել մի այնպիսի «այո՛», որը, քոնինի նման, յարեւման լինի Յիսուսի աղաղակին Իր Հօր առաջ. «Ո՛չ ի՞մ կածք ... » (Ղկս 22, 42). Թող կատարուի ո՛չ թէ իմ, այլ Աստծոյ Կամքը:

2. Որքա՛ն թշուառութիւն: Որքա՛ն մեղքեր: Իմ, քո, ամբողջ մարդկութեան ... :

«Անօրէնութեամբ յղացաւ, եւ 'ի ծնդս ծնաւ զիս ծայր իծ» (Սղմ 50, 7): Ծնուել եմ, ինչպէս բոլոր մարդիկ, մեր նախահօր ու նախամօր մեղքով արատաւորուած: Ապա ... իմ անձնական մեղքերը. ընդվզումներ մտածուած, ցանկացուած, գործուած ... :

Այս գարշելի նեխուածութիւնից մեզ մաքրելու համար, Յիսուս կամեցաւ խոնարհուել եւ ստանձնել ծառայի վիճակը (Հմմտ. Փլպ 2, 7), մարմնանալով Աստուածածնի, Իր Մօր, եւ նաեւ քո ու իմ Մօր, անարատ որովայնում: Ծածուկ ու անհամբաւ կեանքի երեսուն տարիներ ապրեց, աշխատելով ինչպէս սովորական մարդկանցից մէկը, Յովսէփի կողքին: Քարոզեց: Հրաշքներ գործեց ... : Իսկ մենք փոխհատուցում ենք ինչո՞ւ:

Ուրիշ պատճառների կարի՞քն ունես զղջալու համար:

3. Յիսուս սպասում էր Իր Մօր հետ ունենալիք այս հանդիպմանը: Մանկութեան քանի՛ քանի՛ յուշեր: Բեթղէհէմը, հեռաւոր Եգիպտոսը, Նազարէթ աւանը: Այժմ նոյնպէս, նրան Իր կողքին է ուզում, Գողգոթայի բարձրունքին:

Աստուածամօր կարիքն ունենք: ... Գիշերուայ խաւարի մէջ, փոքր մանուկը, երբ վախ է գգում, գոչում է. «Մայրի՛կ»:

Ես նոյնպէս շատ անգամներ պէտք է սրտանց գոչեմ. «Մա՛յր իմ, Մայրի՛կ, ինձ մենակ մի՛ թող»:

4. Աստծոյ Կամքին սեփական անձը լիովին յանձնելուն հասնելու համար որոշակի ճանապարհ կայ անցնելիք: Եթէ դրան տակաւին չես հասել, մի՛ մտահոգուիր. շարունակիր ճիգ գործադրել: Կը գայ մի օր, երբ ուրիշ ճանապարհ աչքիդ չի երեւայ, այլ միայն Ինքը՝ Յիսուս, Իր Ամենասրբուհի Մայրը եւ այն գերբնական միջոցները, որոնք Վարդապետն է մեզ աւանդել:

5. Եթէ հաւատքով ապրող հոգիներ ենք, բաւականին յարաբերական կարեւորութիւն կ'ընծայենք այս աշխարհի իրադարձութիւններին, ինչպէս վարուեցին Սրբերը ... : Տէրը եւ Իր Մայրը չեն լքում մեզ, եւ ամէն անգամ՝ որ հարկաւոր կը լինի, ներկայ կը լինեն, խաղաղութեամբ ու ապահովութեամբ լիացնելու համար սրտերը նրանց՝ ովքեր Իրենց են պատկանում:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ



ՍԻՄՈՆ ԿԻՒՐԵՆԱՑԻՆ
ՕԳՆՈՒՄ Է ՅԻՍՈՒՍԻՆ
ԿՐԵԼՈՒ ԽԱՉԸ

Յիսուս ուժասպառ է: Նրա քայլերը միշտ աւելի դանդաղ են դառնում, մինչ անկարգ զօրախումբը աճապարում է գործը վերջացնել: Եւ այսպէս, երբ Դատավարական դռնով քաղաքից դուրս են գալիս, հրամայում են արտերից վերադարձող մի մարդու, որի անունն էր Սիմոն Կիւրենացի, Աղեքսանդրի եւ Ռուփոսի հայրը, եւ նրան ստիպում են կրել Յիսուսի խաչը (Հմմտ. Մրկ 15, 21):

Չարչարանքների ամբողջութեան մէջ դիտուած, այս օգնութիւնն իրօք փոքր բան է իրենից ներկայացնում: Բայց Յիսուսին բաւական է մի ժպիտ, մի խօսք, մի արարք, սակաւիկ մի սէր, որպէսզի Իր շնորհը գերառատօրէն հեղի Իր մտերիմ ընկերոջ հոգու մէջ: Տարիներ յետոյ, Սիմոնի որդիներն, այլեւս քրիստոնեայ դարձած, ճանաչուելու եւ յարգուելու էին իրենց հաւատակից եղբայրների կողմից: Ամէն բան սկսուել էր խաչի հետ անակնկալ հանդիպումից:

«Յայտնի եղայ նրանց՝ ովքեր ինձնից չէին հարցնում, ինձ գրան նրանք՝ ովքեր ինձ չէին փնտռում» (Ես 65, 1):

Երբեմն, խաչը յայտնւում է առանց որ մենք նախապէս այն ցանկացած լինէինք. Քրիստոս Ինքն է, որ փնտռում է մեզ: Եւ եթէ պատահմամբ, այս անսպասելի, եւ թերեւս այս իսկ պատճառով՝ իմաստով ո՛չ այնքան յստակ, խաչի դիմաց սիրտդ դժկամութիւն ցուցաբերի ... մխիթարութիւններ մի՛ շնորհիր նրան: Իսկ եթէ պահանջի, դու, ազնուաբարոյ կարեկցանքով լի, մտերիմ սրտաբաց խօսակցութեան նման, հանդարտօրէն ասա՛. «Սի՛րտ, սի՛րտ ի խաչ, սի՛րտ ի խաչ»:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐ

1. Ուզում ես իմանալ, թե ինչպե՞ս երախտագիտութիւնդ ցուցաբերես Տիրոջ նկատմամբ, փոխարէն այն ամէնի՝ որ Նա մեր համար արեց: ... Սիրո՛ւ: Ուրիշ ճանապարհ չկայ:

Սէրը սիրով է փոխադրուում: Բայց սիրոյ գոյութեան ապահով նշանը զոհաբերումն է: Քաջութի՛ւն, ուրեմն: Ուրացի՛ր անձդ եւ ուսիդ վրայ վերցրո՛ւ Նրա Խաչը: Այսպիսով վստահ կը լինես, որ Սիրոյն սիրով ես փոխհատուցում:

2. Ուշ չէ, ո՛չ էլ՝ ամէն բան կորած ... : Նոյնիսկ եթէ քեզ այդպէս է թւում: Նոյնիսկ եթէ հազարաւոր չարագուշակ ձայներ ականջիդ դա են կրկնում: Նոյնիսկ եթէ քեզ շրջապատում ու պաշարում են ծաղրական ու թերահաւատ հայեացքներ ... : Լաւ պահի ես հասել, Խաչը ուսդ առնելու համար. Փրկագործութիւնը կատարւում է — ա՛յժմ — եւ Յիսուս բազմաթիւ կիւրենացիների կարիքն ունի:

3. Իրեն սիրելի անձը երջանիկ տեսնելու համար, ազնուաբարոյ հոգին չի երկմտում զոհողութեան դիմաց: Սփոփելու համար տառապող մի դէմք, մեծ հոգին յաղթում է խորշումի զգացմունքներին եւ նուիրւում է առանց այլեւայլ նազանքների ... : Իսկ Աստուած մի կտոր մսից, մի բուռ հողից նուա՞զ արժանի է:

Սովորիր մահացնել քմահաճոյքներդ: Ընդունիր հակառակութիւններն առանց դրանց կշիռը չափազանցելու, առանց դերասանութիւններ անելու, առանց ... ջղադարութիւնների: Եւ աւելի թեթեւ կը դարձնես Յիսուսի Խաչը:

4. «Այսօր այս րան համար փրկութիւն եղաւ, բանի որ սա եւս Աբրահամի որդի է, որովհետեւ ծարդու Որդին եկաւ փնտելու եւ փրկելու կորածին» (Ղկս 19, 9-10):

Զակքէոսը, Սիմոն Կիւրենացին, Դիման, հարիւրապետը ... :

Արդ գիտես, թե ինչու Տէրը քեզ փնտռեց: Շնորհակալութիւն յայտնիր Նրան: ... Բայց գործով եւ ճշմարտութեամբ:

5. Ինչպե՞ս իսկապէս սիրել Յիսուսի Սուրբ Խաչը: ... Փափաքի՛ր այն: ... Տիրոջից կարողութիւն հայցիր՝ Սուրբ Խաչը բոլոր սրտերի մէջ հաստատելու համար, հիւսիսից հարաւ, արեւելքից արեւմուտք, ամբողջ աշխարհով մէկ: Իսկ յետոյ ... ուրախ սրտով հատուցում ընծայիր Նրան. ջանա՛ սիրել Նրան նաեւ այն սրտերի բաբախումներով, որոնք տակաւին չեն սիրում Նրան:

ՎԵՑԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ



ՄԻ ԲԱՐԵՊԱՇՏ ԿԻՆ
ՉՈՐԱՅՆՈՒՄ Է
ՅԻՍՈՒՍԻ ԴԷՄՔԸ

«Ո՛չ Կենք ունի, ո՛չ գեղեցկութիւն, գրաւելու համար ծեր հայեացքները, ո՛չ շուք, որով կարող է հաճելի լինել: Մարդկանցից արհամարհուած ու ծերօնած, վշտակութեան այր, որ լաւ ճանաչուծ է Գառապանքը, ինչպէս ծէկը՝ որի դիմաց ծածկուծ ենք ծեր դէմքը, արհամարհուած էր եւ ծենք նրան ոչինչ էինք համարուծ» (Ես 53, 2-3):

Իսկ ով անցնում է, Աստծոյ Որդին է, խեղճ ... Սիրո՛յ խենթ:

Մի կին, որի անունն էր Վերոնիկա, ամբոխի մէջ ճանապարհ է բացում: Ձեռքին կրում է վուշէ կրկնակի ծալուած սպիտակ լաթի մի կտոր, որով բարեպաշտութեամբ սրբում ու չորացնում է Յիսուսի Դէմքը: Տէրը լաթի ծալքերով ձեւացած երեք մասերի վրայ դրոշմուած է թողնում Իր Սուրբ Դէմքի պատկերը:

Յիսուսի սիրալիր Դէմքը, որ ժպտացել էր մանուկներին եւ փառքով պայծառակերպուել էր Թաբոր լեռան գագաթին, արդ քողարկուած է վշտի ու ցաւերի մէջ: Բայց այդ ցաւերը մեր մաքրագործումն են, քրտինքն ու արիւնը, որ նսեմացնում ու այլափոխում են Իր դիմագծերը, մեր սրբութիւնն են:

Տէր, տուր ինձ Քո շնորհը, որի օգնութեամբ վճռական որոշեմ դէմքիցս հեռացնել – ապաշխարութեամբ – տխուր դիմակը, որ ձուլել ու կաղապարել եմ իմ խեղճութիւններով ... :

Այնժամ, միմիայն այնժամ, հայեցողութեան ու քաւութեան ճանապարհի ընթացքին, քիչ առ քիչ իմ կեանքը հաւատարմօրէն կ'ընդօրինակի Քո կեանքի ուրուագծերը: Միշտ աւելի կը նմանուենք Քեզ:

Ա՛յլ ոմն Քրիստոսներ կը լինենք, միեւնոյն Քրիստոսը, նոյն Ինքն Քրիստոս:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐ

1. Մեր մեղքերն էին խաչելութեան պատճառը. այն տուայտանքների, որ այլալուծ էին Յիսուսի մեծապէս սիրելի կերպարանքը, Յիսուսի՝ որ կապարեալ Աստուած է եւ կապարեալ մարդ: Եւ դեռ մեր խեղճութիւններն են, որ այժմ ծածկում են մեր հայեացքը եւ խանգարում են հայելու Տիրոջը, Նրա կերպարանքը մեր աչքերին մառախլապատ ու կեղծուած ցոյց տալով:

Երբ մեր տեսողութիւնը մթազնում է, երբ մեր աչքերը մշուշով են պատւում, պէտք է ուղղուենք զէպի լոյսը: Իսկ Քրիստոս ասել է. «Ես եմ լոյս աշխարհի» (Յվհ 8, 12), ես աշխարհի լոյսն եմ: Եւ յաւելում է. «Ով հետեւում է ինձ, խաւարի մէջ չի ընթանայ, այլ կը ստանայ կեանքի լոյսը»:

2. Յաճախակի խորհրդածիր Յիսուսի Սրբազնասուրբ Մարդկութեան մասին ... : Եւ Նա հոգուդ մէջ մի անյագ քաղց կ'առաջացնի, մի «չափազանց ու մարդկային կարողութիւնների համեմատ անհամաչափ» փափաք՝ զմայլուելու Իր Դէմքով:

Այդ կարօտի մէջ – որին անհնարին է յագուրդ տալ այստեղ՝ երկրի վրայ – շատ անգամներ կը գտնես մխիթարութիւնդ:

3. Պետրոս Առաքեալը գրում է. Յիսուս Քրիստոսի միջոցով Աստուած «պարգեւեց ծեփ ծեփա՞ծն ու թանկագին բարիքները, որոնք խոստացուել էին, որպէսզի դրանց միզոցով մասնակից դառնայիք աստուածային բնութեանը» (2Պտ 1, 4):

Մեր այս աստուածացումը չի նշանակում դադարել մարդկային լինելուց ... : Մարդիկ, այո՛, բայց մահացու մեղքի հանդէպ սոսկումով: Մարդիկ, որ խորշում են ներելի թերացումներից եւ որ, սեփական տկարութեան ամէնօրեայ փորձառութիւնն ունենալով հանդերձ, լաւ ճանաչում են նաեւ Աստծոյ զօրութիւնը:

Այսպէս, ոչինչ չի կարող խոչընդոտել մեր ընթացքը. ո՛չ մարդկային յարգանքը, ո՛չ կրքերը, ո՛չ մարմինը՝ որ ընդվզում է, քանի որ բարի քիչ բան ենք թողել մեզնում, ո՛չ հպարտութիւնը, ո՛չ էլ ... միայնութիւնը:

Քրիստոնեան երբեք միայնակ չէ: Եթէ քեզ լքուած ես զգում, պատճառն այն է՝ որ չես կամենում հայել Քրիստոսին, որ ընդհուպ քո կողքին է ... թերեւս խաչով:

4. «Որպէսզի յարաբեւ երախտագիտութիւն մարուցենք Քեզ»: Աստուած իմ, շնորհակալութիւն, շնորհակալութիւն ամէն ինչի համար. հակառակութիւնների, այն բաների՝ որ չեմ հասկանում, այն բաների՝ որոնք ինձ ցաւ են պատճառում:

Հարուածները հարկաւոր են, մարմարէ մեծ զանգուածից աւելորդ կտորները հեռացնելու համար: Այսպէս Աստուած հոգիներում քանդակում է Իր Որդու պատկերը: Շնորհակալութիւն յայտնիր Տիրոջը այս փափկանկատութիւնների համար:

5. Երբ մենք՝ քրիստոնեաներս ծանրօրէն տառապում ենք, պատճառն այն է՝ որ այս կեանքին չենք տալիս իր աստուածային ամբողջ նշանակութիւնը:

Ուր ձեռքը զգում է փշերի խայթոցը, աչքերը բացայայտում են վարդերի բուրումնաւէտ հիւնալի մի փունջ:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ



ՅԻՍՈՒՍ ԸՆԿՆՈՒՄ Է ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ

Քաղաքի պարիսպներից դուրս արդէն, Յիսուսի մարմինը կրկին նուազում է անուժութիւնից եւ ընկնում է երկրորդ անգամ, ամբոխի աղաղակների ու զինուորների հրմշտոցների ուղեկցութեամբ:

Մարմնի տկարութիւնն ու հոգու դառնութիւնը Յիսուսի կրկին անկման պատճառը եղան: Մարդկանց բոլոր մեղքերը – իմինները նոյնպէս – ծանրանում են Նրա Արբազնասուրբ Մարդկութեան վրայ:

«Նա իր վրայ է վերցրել ծեր ծեղքերը եւ ծեր հաճար է չարչարուած, իսկ ծէնք նրան հաճարուած էինք Աստուծոյ կողմից պատժուած, հարուածուած ու խոնարհեցուած: Նա ծեր ծեղքերի պատճառով խոցուեց, ծեր աւօրէնութիւնների պատճառով պատժուեց: Պատիժը, որ ծեղ փրկութիւն է շնորհուած, նրա վրայ թափուեց. նրա վերքերով ծէնք բժշկուեցինք» (Ես 53, 4-5):

Յիսուս տապալւում է գետնին, բայց իր անկումը մեզ կրկին ոտքի է կանգնեցնում, իր մահը մեզ յարութիւն է պարգեւում:

Չարի մէջ մեր շարունակական անկմանը Յիսուս պատասխանում է մեզ փրկելու իր յարատեւ Կամքով, ներման գերառատութեամբ: Եւ, որպէսզի ոչ ոք չյուսահատուի, տաժանելի ջանքեր գործադրելով կրկին ոտքի է կանգնում, խաչը գրկելով:

Սայթաքումներն ու պարտութիւնները թող մեզ Նրանից այլեւս երբեք չբաժանեն: Ինչպէս տկար մանուկն է զղջացած նետում իր հօր ուժեղ բազուկների մէջ, դու եւ ես պինդ բռնենք Յիսուսի լուծը: Միմիայն այս զղջումն ու այս խոնարհութիւնը մեր մարդկային տկարութիւնը կը կերպարանափոխեն աստուածային զօրութեան:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐ

1. Յիսուս ընկնում է խաչափայտի ծանրութեան պատճառով: ... Մենք՝ երկրային իրողութիւնների հանդէպ զգացած հրապուրանքի:

Գերադասում է ընկնել, քան թողնել Խաչը: Այս կերպ Քրիստոս դարմանում է սիրոյ պակասը, որ մահացու հարուածներով տապալում է մեզ:

2. Ինչո՞ւ այս վհատութիւնը: Խեղճութիւնների՞ պատճառով: Թէ՞ պարտութիւններիդ, որոնք երբեմն կրկնում են: Մի մե՛ծ, մե՛ծ շառաչիւնի՞ պատճառով, որին չէիր սպասում:

Պարզ եղիր: Բա՛ց սիրտդ: Տե՛ս, որ դեռեւս ոչինչ կորած չէ: Դեռ կարող ես յառաջ քայլել, եւ է՛լ աւելի մեծ սիրով, է՛լ աւելի մեծ խանդաղատանքով, է՛լ աւելի ամբողթեամբ ու զօրութեամբ:

Ապաւինիր աստուածային որդեգրութեանդ. Աստուած քո Հայրն է, որ սիրում է քեզ: Սա՛ է քո ապահովութիւնը, ծովայատակը՝ որից պէտք է կառչի խարխալը, ինչ էլ որ պատահի կեանքի ծովի մակերեսին: Եւ կը գտնես բերկրանք, զօրութիւն, լաւատեսութիւն, յաղթանակ:

3. Ինձ ասացիր. «Հայր, իսկապէս վատ պահ եմ անցկացնում»:

Եւ քեզ պատասխանեցի, ականջիդ շշնջալով. «Քո ուսերիդ վերցրու այդ խաչի մի փոքրիկ մասը, միայն մի փոքրիկ մասը: Իսկ եթէ այդքանն անգամ չես կարողանում ... , ամբողջութեամբ Քրիստոսի հզօր ուսերի վրայ թող: Եւ, այս պահից իսկ սկսած, կրկնիր ինձ հետ. "Յէր, Աստուած ի՞մ, Բո ձեռքերին եմ յանձնում անցեալը, ներկան ու ապագան, փոքր իրողութիւններն ու ծեծերը, քիչն ու շաքր, Ժամանակաւորն ու յաւիտեանկանը"»:

Եւ հանդարտ մնայ»:

4. Երբեմն ինքս ինձ հարց էի տալիս, թէ արդեօք ո՞ր մարտիրոսութիւնն է աւելի մեծ. մարտիրոսութիւնը նրա՞նով մահուան է ենթարկւում հաւատքի համար, Աստծոյ թշնամիների ձեռքո՞վ, թէ՞ մարտիրոսութիւնը նրա՞նով իր տարիները ծախսում է որպէս միակ նպատակ ունենալով ծառայել Եկեղեցուն եւ հոգիներին, եւ ծերանում է ժպիտը դէմքին, եւ անցնում է առանց իր վրայ ուշադրութիւն գրաւելու ... :

Իմ կարծիքով, անշուք մարտիրոսութիւնն աւելի հերոսական է: ... Քո ճանապարհը սա՛ է:

5. Տիրոջը հետեւելու, Նրա հետ ընտանութիւն ունենալու համար, պէտք է ինքներս մեզ ոտնակոխ անենք խոնարհութեամբ, ինչպէս խաղողն է հնձանում տրորւում:

Եթէ ոտնակոխ ենք անում մեր թշուառութիւնը – ճիշտ սա՛ ենք մենք – յայնժամ Նա բնակութիւն է հաստատում հոգում, Իրեն այնտեղ հանգիստ զգալով: Ինչպէս Բեթանիայում, խօսում է մեզ եւ մենք խօսում ենք Իրեն, ընկերային մտերիմ ու վստահասիրտ զրոյցով:

ՈՒԹՆԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ



ՅԻՍՈՒՍ ՄԵԻԹԱՐՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿԱՆԱՆՑ

Ամբոխի մէջ, որ դիտում է Տիրոջ անցնելը, կան մի քանի կանայք, որոնք չեն կարողանում զսպել կարեկցանքի զգացումները եւ սկսում են բարձրագոյն արտասուել, թերեւս մտաբերելով Յիսուսի փառահեղ օրերը, երբ ամէն ոք հիացած բացականչում էր. «Ձածենայն ինչ բարւոք գործեաց սա» (Մրկ 7, 37), սա ամէն բան լաւ արեց:

Տէրը, սակայն, նրանց այդ ողբը կամենում է մի աւելի գերբնական պատճառի ուղղել, եւ նրանց կոչ է անում արտասուելու մեղքերի համար, որոնք Իր Չարչարանքների պատճառն են եւ որոնք իրենց վրայ են քաշելու աստուածային արդարութեան սաստկութիւնը. «Երուսաղէմի դուստրեր, ի՞մ վրայ լաց ծի՛ եղէք, այլ լաց եղէք ձեր եւ ձեր որդիների վրայ ... որովհետեւ եթէ դաւար փայտի հեփ այսպէս են վարւում, ի՞նչ է պատահելու չորի հեփ» (Ղկս 23, 28.31):

Քո մեղքերը, իմ մեղքերը, բոլոր մարդկանց մեղքերը ոտքի են կանգնում: Ամբողջ չարիքը, որ գործել ենք, եւ ամբողջ բարիքը, որ զանց ենք առել գործելու: Յաւալի համապատկերը ոճիրների ու անթիւ անհամար անարգութիւնների, որոնք կը գործէինք, եթէ Նա, Յիսուսը, մեզ սփոփած չլինէր Իր ամենասիրալիր հայեացքի լոյսով:

Մի կեանքը շա՛տ քիչ է հատուցելու եւ վնասուածքները վերակազմելու համար:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐ

1. Սրբերն — ասում ես — չէին կարողանում սրտակեղեք արցունքները զսպել, երբ մտորում էին մեր Տիրոջ Չարչարանքների մասին: Ես, մինչդեռ, ... :

Պատճառը թերեւս այն է, որ դու եւ ես ներկայ ենք գտնւում դէպքերին, հանդիսատեսի նման, բայց դրանք չենք «ապրում»:

2. «Իւրայիշնների ծօք եկաւ, բայց իւրայիշները նրան չընդունեցին» (Յվհ 1, 11): Դե՛ռ աւելի վատթարն արեցին. նրան քաղաքից բռնի դուրս հանեցին, որպէսզի այնտեղ նրան խաչէին:

Յիսուս պատասխանում է զղջումի կոչ ուղղելով, զղջում ա՛յժմ, մինչ հոգին ուղեւորութեան մէջ է եւ քանի դեռ ժամանակ ունենք:

Խորին զղջում, մեր մեղքերի համար: Վիշտ, մարդկանց անսպառելի չարութեան համար, որ պատրաստւում է Տիրոջը մահ պատճառել: Հատուցում, բոլոր նրանց փոխարէն, ովքեր տակաւին յամառօրէն ամուլ են դարձնում Քրիստոսի խաչի զոհը:

3. Հարկաւոր է միաւորել, հարկաւոր է ըմբռնել, հարկաւոր է ներել:

Երբեք խաչ չկանգնեցնել պարզապէս յիշելու կամ յիշեցնելու համար, որ ինչ որ մէկը սպանել է ինչ որ մի ուրիշի: Դա սատանայի դրօշը կը լինէր:

Քրիստոսի խաչը առաջնորդում է լռելու, ներելու եւ մէկը միւսի համար աղօթելու, որպէսզի բոլորը գտնեն խաղաղութիւնը:


4. Վարդապետն անցնում է, մի անգամ եւ կրկին անգամներ եւս, մեր կողքին շատ մօտիկից: Նայում է մեզ ... : Եւ եթէ պատասխանես նրա հայեացքին, եթէ նրան լսես, եթէ նրան չմերժես, նա քեզ կ'ուսուցանի՝ թէ ինչպէս կարող ես գերբնական նշանակութիւն հաղորդել քո բոլոր գործերին: ... Յայնժամ դու նոյնպէս կը սերմանես, ամէնուր՝ ուր որ գտնուես, մխիթարութիւն եւ խաղաղութիւն եւ բերկրանք:

5. Ինչքան էլ որ սիրես, երբեք չես սիրի բաւական:

Մարդկային սիրտն ընդարձակման վիթխարի կարողութիւն ունի: Երբ սիրում է, ընդարձակւում է գորովի շարունակական սասկիւնացմամբ, որն յաղթահարում է բոլոր խոչընդոտները:

Եթէ դու սիրում ես Տիրոջը, մի արարած չի մնայ՝ որ տեղ չգտնի քո սրտում:

ԻՆՆԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ



ՅԻՍՈՒՍ ԸՆԿՆՈՒՄ Է ԵՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ

Տէրն ընկնում է երրորդ անգամ, Գողգոթայի զառիվերին, մինչ քառասուն կամ յիսուն քայլ է պակասում գազաթին: Յիսուս չի կարողանում ոտքի վրայ մնալ. ուժերը լքում են Նրան եւ նուաղած գետին է ընկնում:

«Խոշորանգուած՝ խոնարհուեց եւ իր բերանը չբացեց: Դէպի սպանդ փարուող գառան նման էր, ինչպէս որոզն է անձայն՝ իրեն խուլողների դիմաց» (Ես 53, 7):

Բոլորը Նրա դէմ էին. ... քաղաքի բնակիչներն ու եկեղեցիները, փարիսեցիները, զինուորները, քահանայապետները ... : Բոլորը՝ դահիճներ: Իր Մայրը — իմ Մայրը — Մարիամն արտասուում է:

Յիսուս կատարում է Իր Հօր Կամքը: Աղքատ է. մերկ: Վեհանձն է. աւելի ի՞նչ կարող է տալ: «Սիրեացն չիս, եւ ծափնեաց զանձն վասն իծ» (Գղտ 2, 20), սիրեց ինձ եւ Իր Անձը նուիրեց իմ համար, մինչեւ մահ:

Աստուած իմ, այնպէս արա՛ որ ես ատեմ մեղքը եւ միանամ Քեզ, փարուելով Սուրբ Խաչին, որպէսզի ես նոյնպէս կատարեմ Քո սիրալիր Կամքը, ... մերկացած՝ երկրային բոլոր գորովներից, առանց Քո փառքից բացի ա՛յլ նպատակների, ... վեհանձնօրէն, առանց ինքս իմ համար որեւիցէ մի բան վերապահելու, Քո հետ միասին որպէս կատարեալ ողջակէզ նուիրուելով:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐ

1. Տէրն այլեւս չի կարողանում կրկին ոտքի կանգնել. այդքա՛ն ծանրակշիռ է մեր խեղճութեան բեռը: Նրան պարկի նման քարշ են տալիս մինչեւ կառափնատեղին: Նա թոյլ է տալիս, լուռութեամբ:

Յիսուսի խոնարհութիւնը: Ինքնախոնարհեցումը Աստծոյ, որ մեզ կրկին ոտքի է կանգնեցնում եւ պանծացնում է մեզ: Հիմա հասկանո՞ւմ ես, թէ ինչու քեզ խորհուրդ տուի սիրտդ գետնի վրայ դնելու, որպէսզի ուրիշները փափուկ հարթակի վրայով քայլեն:

2. Քանի՛ցս ծանր է Գողգոթային հասնելը:

Դու նոյնպէս պէտք է յաղթես ինքդ քեզ, որպէսզի չլքես ճանապարհը ... : Այս պայքարը զարմանահրաշ է, Աստծոյ սիրոյ իրական ապացոյցներից մէկն է, որովհետեւ Նա կամենում է՝ որ մենք ուժեղ լինենք, քանի որ «ԿՕՐԱԹԻՆՆ ՚Ի ԿԿԱՐԱԹԵԱՆ ԿԱԿԱՐԻ» (2Կր 12, 9), առաքիւնութեան զօրութիւնը տկարութեան մէջ է ամրապնդւում:

Տէրը գիտէ, որ երբ մեզ ներքուստ յոգնած ենք զգում, մօտենում ենք Իրեն, աւելի լաւ ենք աղօթում, աւելի շատ զոհողութիւններ ենք կատարում, աւելի ենք սաստկացնում մերձաւորի հանդէպ սէրը: Այսպէս է, որ դառնում ենք սուրբ:

Երախտագիտութիւն յայտնիր Տիրոջը, շա՛տ ու շա՛տ, որ թոյլատրում է փորձութիւնները ... եւ որ պայքարում ես:

3. Ուզո՞ւմ ես մօտիկից, շատ մօտիկից ընկերակցես Յիսուսին: ... Բացի՛ր Սուրբ Աւետարանը եւ ընթերցիր Տիրոջ Չարհարանքները: Միայն ընթերցելը բաւակա՞ն է: Ո՛չ, հարկաւոր է նաեւ ապրել: Տարբերութիւնը մեծ է: Ընթերցել՝ նշանակում է վերջիչել անցեալի իրադարձութիւնները: Ապրել՝ նշանակում է ներկայ գտնուել մի դէպքի, որ կատարւում է ճիշտ այդ պահին. նշանակում է միւսների հետ լինել այդ իրադարձութիւններում:

Ապա, թո՛ղ՝ որ սիրտդ պոռթկայ, որ Տիրոջ կողքին մնայ: Իսկ երբ զգաս, որ սիրտդ փախչում է — վախկոտ ես, միւսների նման — ներում հայցիր քո վատասրտութեան եւ իմ վատասրտութեան համար:

4. Թւում է, թէ աշխարհն իր ամբողջ ծանրութեամբ քանդւում է քո վրայ: Ելքի ոչ մի ճանապարհ չի նշմարւում: Այս անգամ անհնարին է յաղթահարել ծագած դժուարութիւնը:

Ուրեմն, կրկին սկսել ես մոռանա՞լ, որ Աստուած քո Հայրն է. ամենակարող, անսահմանօրէն իմաստուն, գթասիրտ ու ողորմած: Նա չի կարող քեզ ոչ մի չարիք ուղարկել: Այն, ինչը որ քեզ մտահոգում է, իրականում քեզ շահաւէտ է, թէեւ քո մարմնական աչքերը այս պահին կուրացած են:

Աժէն բան նպաստում է բարուն: Տէր, եւս մէկ անգամ եւ միշտ թող որ կատարուի Քո իմաստնագոյն Կամքը:

5. Հիմա հասկանում ես, թէ որքա՛ն տառապանք ես պատճառել Յիսուսին, եւ հոգիդ վշտով է լցուել: Քանի՛ցս հեշտ է Նրանից ներում հայցել եւ արտասուել քո անցեալ

դաւաճանութիւնների վրայ: Կուրծքդ բաւական չէ հատուցման փափաքդ պարունակելու համար:

Շատ լաւ: Բայց մի՛ մոռացիր, որ ապաշխարութեան հոգին գլխաւոր կերպով կայանում է կատարելու մէջ – ի՛նչ էլ որ արժենայ – իւրաքանչիւր պահի պարտականութիւններդ:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ



ՅԻՍՈՒՍ ՄԵՐԿԱՑԻՈՒՄ Է ԻՐ ԶԳԵՍՏՆԵՐԻՑ

Երբ Տէրը հասնում է Գողգոթայի գագաթին, Նրան լեզի խառնուած գինի են տալիս խմելու, որպէս թմրեցուցիչ, մի քիչ մեղմելու համար խաչելութեան ցաւերը: Բայց Յիսուս այն համտեսում է միայն, որպէս այդ գթասիրտ ծառայութեան համար շնորհակալութեան նշան, բայց չի կամենում ամբողջութեամբ խմել (հմտ. Մտթ 27, 34): Մահուան է յանձնւում Սիրոյ լիակատար ազատութեամբ:

Ապա, զինուորները մերկացնում են Յիսուսին Իր զգեստներից:

«Ուրբի ծայրից ծիծեռ գլուխը, նրա վրայ անվնաս փեղ չկայ, այլ խոցեր ու այրուցքներ ու բաց վերքեր, որոնց վրայ սպիտակի ջեշ դրել, ո՛չ էլ վիրակապել, ո՛չ էլ ձէթով խնածել» (Ես 1, 6):

Դահլճները վերցնում են Նրա զգեստները եւ դրանք չորս մասի են բաժանում: Իսկ քանի որ պատմուճանն առանց կարի էր, այլ վերեւից ներքեւ ամբողջութեամբ շուրջանակի հիւսուած, ուստի միմեանց ասում են. «Սա չպարուէնք, այլ վիճակ գցէնք, ուժ որ էլնի» (Յվհ 19, 24):

Այդպիսով կրկին կատարւում է Գրուածքը. «Ձգեսքներս իրար ծէգ բաժանեցին, իսկ պարծուճանիս վրայ վիճակ գցեցին» (Սղմ 21, 19):

Մերկացումն է, հանդերձանքից զրկուելը, բացարձակ աղքատութիւնը: Տիրոջը ոչինչ չի մնում, խաչափայտից բացի:

Աստծուն հասնելու համար, ճանապարհը Քրիստոսն է: Բայց Քրիստոս ինչի վրայ է, իսկ ինչի վրայ բարձրանալու համար հարկաւոր է ազատ սիրտ ունենալ, երկրային իրականութիւններից անջատուած:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐ

1. Դատարանից մինչև Գողգոթա, Յիսուսի վրայ էին թափուել կատաղած ամբոխի անարգանքները, զինուորների վայրագութիւնները, հրեաների բարձրագոյն ատեանի ծաղրանքը ... : Ծաղրանքներ ու անարգանքներ ... : Յիսուսի կողմից եւ ոչ իսկ մէկ գանգատ, բողոքի եւ ոչ իսկ մէկ խօսք: Եւ ոչ իսկ երբ առանց յարգանքի որոշակի դրսեւորումների Նրանից խլում են Իր զգեստները:

Հիմա տեսնում եմ անմտութիւնը՝ երբ կամենում եմ ինքս ինձ արդարացնել, կամ երբ բազում ունայն խօսքեր եմ արտասանում: Հաստատուն առաջադրանքս է լինելու աշխատել եւ տառապել Տիրոջ համար, պահպանելով լռութիւնը:

2. Յիսուսի վէրքերով ծածկուած մարմինն իսկապէս ցաւերի ծի հաճապակէր է ... :

Հակադրաբար, միտքս են գալիս բազմաթիւ յարմարաւէտութիւններ, բազմաթիւ քմահաճոյքներ, բազմաթիւ անհոգածութիւններ, բազմաթիւ ժլատութիւններ ... : Եւ կեղծ կարեկցանքը, որով վարւում եմ մարմնիս հետ:

Տէր, յանուն Քո Չարչարանքների եւ յանուն Քո Խաչի, զօրացրու ինձ, որպէսզի կեանքում իսկապէս գործադրեմ զգայարանների սանձահարումը եւ արմատախիլ անեմ այն ամէնը՝ որն ինձ հեռացնում է Քեզնից:

3. Քեզ, որ վհատւում ես, կրկնելու եմ շա՛տ մխիթարական մի բան. ով անում է այն՝ ինչն իր կարողութիւնների սահմանում է, Աստուած չի մերժում Իր շնորհը: Մեր Տէրը Հայր է, եւ եթէ Իր որդիներից մէկն Իրեն ասում է, սրտի հանդարտութեան մէջ. «Երկնաւոր իմ Հայր, ահա՛ ես, օգնի՛ր ինձ» ... , եթէ դիմում է Աստուածածնին, որ մեր Մայրն է, կարողանում է:

Բայց Աստուած ճշտապահանջ է: Իրական սէր է պահանջում: Դաւաճաններ չի ընդունում: Հարկաւոր է հաւատարիմ լինել այս գերբնական պայքարին, ինչը որ նշանակում է երջանիկ լինել երկրի վրայ ի գին զոհողութիւնների:

4. Իրական խոչընդոտները, որ քեզ բաժանում են Քրիստոսից — հպարտութիւնը, զգայասիրութիւնը, ... — յաղթահարւում են աղօթքով եւ ապաշխարութեամբ: Իսկ աղօթել եւ զոհողութիւններ կատարել նշանակում է նաեւ զբաղուել ուրիշներով եւ մոռանալ սեփական անձը: Եթէ այսպէս ապրես, կը տեսնես՝ որ ձախորդութիւն կոչածներիդ մեծամասնութիւնը կ'անհետանայ:

5. Երբ պայքարում ենք՝ լինելու համար իսկապէս Նոյն Ինքն Քրիստոս, Քրիստոսի հետ նոյնանալու համար, յայնժամ մեր կեանքում մարդկայինը համահիւսւում է աստուածայինի հետ: Մեր բոլոր ջանքերը — նաեւ ամենաանշանները — յաւիտենական արժէք են ստանում, որովհետեւ միանում են Յիսուսի Խաչի վրայ ընծայուած զոհին:

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ



ՅԻՍՈՒՍ ԳԱՄԻՈՒՄ Է ԽԱՉԻՆ

Այժմ խաչում են Տիրոջը եւ, Նրա կողքին, երկու չարագործների, մէկն աջ, իսկ միւսը ձախ կողմում: Մինչ մարդիկ խաչում են իրեն, Յիսուս աղօթում է. «Յայր, ներիր նրանց, որովհետեւ չգիտէն՝ թէ ինչ են անում» (Ղկա 23, 34):

Սէրն էր, որ Յիսուսին դէպի Գողգոթա առաջնորդեց: Եւ, արդէն խաչի վրայ, իր բոլոր արարքները եւ իր բոլոր խօսքերը սիրուց են, հանդարտ եւ զօրեղ սիրուց:

Մի արարքով, որ բնորոշ է Յաւիտենական Քահանային, որն անհայր է ու անմայր, առանց ազգատոհմի (հմմտ. Եբր 7, 3), իր բազուկները բացում ու տարածում է ամբողջ մարդկութեան դիմաց:

Յիսուսին գամող մուրճի հարուածների հետ միասին, կրկին հնչում են Աստուածաշնչի մարգարէական խօսքերը. «Ձեռքերս ու ոտքերս ծակեցին, բոլոր ոսկորներս հաշուեցին: Նրանք դիպում են ինձ ու գննում» (Սղմ 21, 17-18):

«Ժողովուրդ ի՞մ, ի՞նչ եմ արել քեզ, ինչո՞վ եմ ցրտութիւն պատճառել քեզ, կամ ինչո՞վ եմ նեղութիւն ցուել քեզ: Պատասխա՛ն ցուր ինձ» (Միք 6, 3):

Եւ մենք, վշտաբեկ հոգիով, Յիսուսին անկեղծութեամբ ասենք. «Քոնն եմ, եւ ինձ յանձնում եմ Քեզ, եւ յօժարութեամբ զամուսն եմ խաչին, երկրի խաչմերուկներում Քեզ նուիրուած հոգի լինելու համար. Քեզ, Քո փառքին, Փրկագործութեանը, ամբողջ մարդկութեան փրկութեան մէջ Քեզ գործակցելուն:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐ

1. Յիսուսին արդէն գամել են խաչափայտին: Դահլիճներն անգթօրէն գործադրել են դատավճիռը: Տէրը թոյլ տուեց, որ այդպէս վարուեն, Իր կողմից անսահման հեզութիւն ցուցաբերելով:

Այդքա՛ն տառապանք անհրաժեշտ չէր: Նա կարող էր խուսափել այդ դառնութիւններից, այդ խոնարհեցումներից, այդ խոշտանգումներից, այդ անիրաւ դատաստանից, եւ կառափնարանի ամօթից, եւ գամերից, եւ գեղարդի հարուածից ... : Բայց կամեցաւ այդ ամէնը կրել քո համար եւ իմ համար: Իսկ մե՞նք, փոխադարձելու եւ հատուցելու ընդունակ չե՞նք լինելու:

Շատ հաւանական է, որ երբեմն, Խաչելութեան առաջ դէմ առ դէմ միայնակ մնալով, աչքերդ արցունքներով թրջուեն: Չգսպես դրանք ... : Բայց այնպէս արա՛, որ արտասուքն աւարտուի առաջադրանքով:

2. Այնքա՛ն եմ սիրում Խաչեալ Քրիստոսին, որ իւրաքանչիւր Խաչելութեան դիտելիս կարծես լսում եմ իմ Աստծոյ կողմից ինձ ուղղուած գորովալի յանդիմանութիւնը. « ... Ես, որ տառապում եմ, իսկ դու ... վախկոտ: Ես, որ քեզ սիրում եմ, իսկ դու, որ ինձ մոռացութեան ես մատնում: Ես, որ փնտռում եմ քեզ, իսկ դու ... որ ինձ ասում ես ո՛չ: Ես այստեղ, յաւիտենական Փահանայի դիրքում, որ կրում եմ հնարաւոր բոլոր տառապանքներն ի սէր քո ... , իսկ դու տրտնջում ես քեզ պատահող չնչին անհասկացողութիւնների, նուազագոյն խոնարհեցումներիդ համար ... »:

3. Որքա՛ն գեղեցիկ են խաչերը սարերի գլխին, մեծ յուշարձանների գագաթին, մայր եկեղեցիների զանգակատների գմբէթների վրայ ... : Բայց Խաչը հարկաւոր է բարձրացնել նաեւ աշխարհի սրտում:

Յիսուս ճիշտ այնտե՛ղ է կամենում բարձրացուել. գործարանների ու արհեստանոցների աղմուկի մէջ, գրադարանների լռութեան, փողոցների ժխորի, արտերի ու այգիների անդորրի, ընտանիքների ամփոփ միջավայրի, հաւաքոյթների, մարզադաշտերի ... : Այնտեղ, ուր քրիստոնեան կարող է իր կեանքն ապրել պարկեշտ ուղղամտութեամբ, պէտք է իր սիրով բարձրացնի Քրիստոսի Խաչը, որ դէպի Ինքն է ձգում ամէն բան:


4. Բազմաթիւ տարիներ յետոյ, այդ քահանան մի հիանալի բացայայտում կատարեց. հասկացաւ, որ Սուրբ Պատարագն իրական աշխատանք է. Աստուծոյ աշխատանքը: Եւ այդ օրը, մինչ ծիսակատարում էր, զգաց ցաւ, բերկրանք եւ յոգնութիւն: Իր մարմնի մէջ զգաց աստուածային աշխատանքի պահանջած յոգնութիւնը:

Քրիստոսից նոյնպէս ջանքեր խլեց առաջին Պատարագը. Խաչելութիւնը:

5. Աշխատանքի անցնելուց առաջ, սեղանիդ վրայ կամ գործիքներիդ կողքին մի Խաչելութիւն դիր: Երբեմն հայեացքդ Նրան ուղղիր ... : Երբ քեզ յոգնած կը զգաս, աչքերդ Յիսուսի վրայ սեւեռիր եւ նորոգ ուժ կը գտնես պարտաւորութիւններիդ կատարման գործում:

Որովհետեւ խաչելութիւնն աւելին է՝ քան քեզ սիրելի մի անձի դիմանկարը. — ծնողներ, զաւակներ, կին, նշանած, ... — : Նա Ամէնն է. քո Հայրը, քո Եղբայրը, քո Ընկերն ու Մտերիմը, քո Աստուածը, եւ քո սէրերի Սէրը:

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ



ՅԻՍՈՒՍ ՄԱՀԱՆՈՒՄ Է ԽԱԶԻ ՎՐԱՅ

Խաչի վերելում զրուած է դատապատժի պատճառը. «Յիսուս Նազովրեցի, հրեաների Թագաւոր» (Յվհ 19, 19): Եւ բոլոր անցորդները նախատում են նրան ու ծաղրում:

«Եթէ Իսրայէլի թագաւորն է, հիմա թող Խաչից իջնի» (Մտթ 27, 42):

Աւագակներից մէկը միջամտում է ի պաշտպանութիւն Յիսուսի.

«Սա որեւէ վնաս բան չի արել ... » (Ղկս 23, 41):

Ապա Յիսուսին է ուղղում հաւատքով լի իր խոնարհ աղերսանքը.

«Յիսուս, յիշիր ինձ, երբ ծախես արքայութեանդ ծէզ» (Ղկս 23, 42):

«Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ դրախտում կը լինես» (Ղկս 23, 42):

Խաչի կողքին է իր Մայրը, Մարիամը, ուրիշ սուրբ կանանց հետ միասին: Յիսուս նայում է նրան, ապա նայում է սիրեցեալ աշակերտին, եւ իր Մօրն ասում է.

«Կին, ահա քո որդին»:

Ապա ասում է աշակերտին.

«Ահա քո ծայրը» (Յվհ 19, 26-27):

Մարում են երկնքի աստղերը եւ երկիրը խորասուզւում է խաւարի մէջ: Մօտաւորապէս ժամը երեքն է, երբ Յիսուս բացականչում է.

«Պէլի՛, Էլի՛, Լա՛մա սաբաթանի՛», որ նշանակում է. «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ լքեցիր ինձ՝» (Մտթ 27, 46):

Ապա, իմանալով՝ որ ամէն բան հասել էր իր կատարումին, որպէսզի Գրուածքը կատարուի, ասում է.

«Ծարաւ եմ» (Յվհ 19, 28):

Զինուորները սպունգը քացախի մէջ թրջում են եւ, եղէգի վրայ անցկացնելով, մօտեցնում են նրա շուրթերին: Յիսուս համտեսում է քացախն ու բացականչում.

«Ամէն ինչ կատարուած է» (Յվհ 19, 30):

Տաճարի վարագոյրը մէջտեղից պատուում է եւ երկիրը դողում է, երբ Տէրը բարձր ձայնով աղաղակում է.

«Յայր, քո ձեռքն եմ աւանդում իմ հոգին» (Ղկս 23, 46):

Եւ հոգին աւանդում է:

Սիրի՛ր զոհողութիւնը, որ ակունք է ներանձնական կեանքի: Սիրի՛ր Խաչը, որ զոհաբերման խորան է: Սիրի՛ր վշտակրութիւնը, մինչեւ որ կը խմես, Քրիստոսի նման, գաւաթի տակի մրուրը:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐ

1. «Եւ խոնարհեցուցեալ զգլուհւ, աւանդեաց զոգին» (Յվհ 19, 30):

Տէրն Իր վերջին շունչը փչեց: Աշակերտները բազում անգամներ էին Նրանից լսել. «Ի՞նչ կերակուր այն է ... , ի՞նչ կերակուրն այն է, որ կարարե՞մ կամքը նրա՝ ով առաքել է ինձ եւ կարարե՞մ նրա գործը» (Յվհ 4, 34): Դա արեց մինչեւ վերջ, համբերութեամբ, խոնարհութեամբ, առանց ոչինչ խնայելու ... : «Լիեալ հնազանդ ծառու չափ» (Փլպ 2, 8). հնազանդուեց մինչեւ մահուան չափ, եւ Խաչի՝ մահուան:

2. Մի Խաչ: Փայտին գամերով բեւեռուած մի մարմին: Տիգախոց կող ... : Յիսուսի հետ են մնում միայն Իր Մայրը, մի քանի կանայք ու մի պատանի: Առաքելները, ո՞ւր են: Իսկ նրա՞նք, ովքեր իրենց հիւանդութիւններից բժշկուեցին. կաղերը, կոյրերը, բորոտները, ... : Իսկ նրա՞նք, ովքեր ծափողջուներում էին Նրան ... : Ոչ ոք չի պատասխանում: Քրիստոս, լռութեամբ շրջապատուած:

Դու նոյնպէս մի օր կարող է գգաս Խաչի վրայ Տիրոջ զգացած միայնութիւնը: Այդ պահին հայցիր օգնութիւնը Նրա՝ ով մահացել է եւ յարութիւն է առել: Նրա ձեռքերի, Նրա ոտքերի, Նրա կողի վէրքերի մէջ ապաստան գտիր: Եւ կը վերանորոգուի վերսկսելու քո կամքը, եւ կրկին ճանապարհ կ'ընկնես աւելի մեծ վճռակամութեամբ ու արդիւնաւէտութեամբ:

3. Ճգնողութեան մի կեղծ մօտեցում կայ, որ Տիրոջ Խաչի վրայ ներկայացնում է դժնի, ըմբոստ: Մարմինը զաւարուած ու կծկուած, որ կարծես սպառնում է մարդկանց. «Ինձ տապալեցիք, բայց ես ձեր վրայ եմ նետելու իմ գամերը, իմ խաչը, իմ փշերը»:

Այդպիսիք չեն ճանաչում Քրիստոսի հոգին: Տառապեց այնքան՝ որքան կարողացաւ — եւ, Աստուած լինելով, չա՛տ կարողացաւ — . բայց սիրում էր աւելի՝ քան որքան տառապում էր ... : Եւ մահից յետոյ, թոյլատրեց՝ որ գեղարդով մի ուրիշ վէրք էլ բացէին, որպէսզի դու եւ ես ապաստան գտնէինք Իր սիրովառ Սրտի մօտ:

4. Շատ անգամներ եմ կրկնել Ամենասուրբ Հաղորդութեան շարականից այս հատուածը. «Յայցու՛մ եմ այն՝ ինչ զղացած աւազակն էր հայցու՛մ», եւ ամէն անգամ յուզւում եմ. հայցել՝ ինչպէս հայցեց զղացած աւազակը:

Նա խոստովանեց, որ այո՛ւ արժանի էր այդ սոսկալի պատժին ... : Եւ մի խօսքով յափշտակեց Քրիստոսի սիրտը եւ իր առջեւ բացեց Երկնքի դռները:

5. Խաչին գամուած է Տիրոջ — այլեւս անշունչ — մարմինը: Մարդիկ, «կրկին ծորրելով պարսաւածի ծասին, այնպէղից վերադառնում էին իրենց կուրծքերը ծեծելով» (Ղկս 23, 48):

Հիմա, որ զղացել ես, Յիսուսին խոստացիր, որ — Իր օգնութեամբ — Իրեն այլեւս երբեք խաչ չես բարձրացնի: Դա ասա՛ հաւատքով: Բազում ու բազում անգամներ կրկնի՛ր. «Սիրելու եմ Քեզ, Աստուած իմ, քանի որ այն օրից՝ ինչ ծնուել ես, այն ժամանակուանից՝ ինչ մանուկ էիր, Քեզ, անպաշտպան, յանձնել ես իմ գիրկը, վստահելով իմ ուղղամտութեանն ու հաւատարմութեանը»:

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ



ՅԻՍՈՒՍ ԻԶԵՅԻՈՒՄ Է
ԽԱԶԻՑ ԵՒ ՅԱՆՁՆԻՈՒՄ
ԻՐ ՄՕՐԸ

Վշտի մէջ ընկղմուած, Մարիամը կանգնած է Խաչի մօտ: Նրա հետ է նաեւ Յովհաննէսը: Բայց արդէն մթնում է, եւ հրեաները պահանջում են՝ որ Տէրն այնտեղից վերցուի:

Մահուան դատապարտուածներին թաղելու համար հռոմէական օրէնքով նախատեսուած արտօնութիւնը Պիղատոսից ստանալուց յետոյ, Գողգոթայի կառավարատեղին է հասնում «Յովսէփ անունով ծի ծարդ, հրեաների Արիմաթէ քաղաքից: Նա բարձրագոյն աստանի խորհրդական էր, բարեգործ եւ արդար ծարդ: Նա չէր համաձայնուել ծիւնների վճռին ու գործերին: Եւ ինքն էլ էր սպասուծ Աստուծոյ արքայութեանը» (Ղկա 23, 50-51): Նրա հետ գալիս է նաեւ Նիկողեմոսը, «որ առաջին անգամ գիշերով Յիսուսի ծօր էր եկել, եւ բերէց ծօր հարիւր լիպր զճուռս՝ հալուէի հետ խառնած» (Յվհ 19, 39):

Նրանք հրապարակայնօրէն ճանաչուած չէին որպէս Վարդապետի աշակերտները. ներկայ չէին գտնուել մեծ հրաշագործութիւններին եւ Նրա կողքին չէին եղել, երբ յաղթական մուտք էր գործում Երուսաղէմ: Այժմ, դժնդակ պահին, մինչ միւսները փախչում են, նրանք չեն վախենում իրենց Տիրոջ համար վտանգի ենթարկել իրենց համբաւն ու հեղինակութիւնը:

Միասին վերցնում են Յիսուսի մարմինը եւ դնում են իր Ամենասրբուհի Մօր գերկը: Մարիամի վիշտը կրկին բորբոքւում է:

«Ո՛ւր է գնացել քո սիրելին, ո՛վ ամենագեղեցիկդ կանանց մէջ: Ո՛ր կողմ գնաց քո սիրելին, որպէսզի մենք կարողանանք փնտռել նրան քո հետ միասին» (Երգ 5, 17):

Ամենասրբուհի Կոյսը մեր Մայրն է, եւ մենք չենք ուզում, եւ ո՛չ էլ կարող ենք, նրան միայնակ թողնել:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐ

1. Եկաւ փրկելու աշխարհը, իսկ իւրայինները Նրան ուրացան Պիղատոսի առաջ:
Ուսուցանեց մեզ բարութեան ճանապարհը, բայց քարշ տուին նրան ճանապարհներով դէպի Գողգոթա:

Օրինակելի եղաւ ամէն ինչում, բայց իր փոխարէն նախընտրեցին մարդասպան գողին:

Ծնունդ ներելու համար, եւ – առանց պատճառի – Նրան չարչարանքների դատապարտեցին:

Ժամանեց խաղաղութեան արահետներով, բայց Նրա դէմ պատերազմ յայտարարեցին:

Լոյսն էր, բայց Նրան խաւարի իշխանութեանը յանձնեցին:

Ամէնքի նկատմամբ սէր էր ցուցաբերում, իսկ փոխարէնը ատելութեամբ հատուցեցին:

Եկաւ Թագաւոր լինելու համար, բայց Նրան փչերով պսակեցին:

Ծառայի կերպարանքը ստանձնեց, մեզ մեղքից ազատելու համար, եւ Նրան Խաչին գամեցին:

Մարմնացաւ մեզ Կեանքը պարգեւելու համար, իսկ մենք Նրան մահով փոխհատուցեցինք:

2. Ձեմ կարողանում ըմբռնել «Քրիստոնեայ» լինելու քո գաղափարը:

Քեզ արդա՞ր է թւում, որ Տէրը մահացել է խաչուած, իսկ դու գոհանում ես միջակութեամբդ:

Այդ միջակութիւնդ արդեօ՞ք այն նեղ ու անձուկ ճանապարհն է, որի մասին խօսում էր Յիսուս:

3. Առաքելութեանդ գործում վհատութեանը տեղ մի՛ տուր: Ձախողուած չես, ինչպէս Քրիստոս Ինքը Խաչի վրայ ձախողուած չէ: Քաջութի՛ւն: ... Շարունակիր հոսանքին հակառակ ընթանալ, Աստուածածնի Մայրական ու Մաքրամաքուր Արտի պաշտպանութեան ներքոյ: «Սրբուհի Մարիամ, ապաւեն մեր եւ զօրութիւն»։ Իմ ապաւենն ես եւ իմ ուժը:

Հանգի՛ստ: Միտքդ խաղա՛ղ: ... Աստուած շատ քիչ մտերիմներ ունի երկրի վրայ: Մի՛ փափաքիր աշխարհից դուրս գալ: Մի՛ խոսափիր օրերի ծանրութիւնից, թէեւ երբեմն շատ երկարածի՞գ են դառնում:

4. Եթէ կամենում ես հաւատարիմ լինել, մեծապէս մարեմական եղիր:

Մեր Մայրը – Հրեշտակապետի աւետումից մինչեւ Խաչի ստորոտում կրած իր հոգեվարքը – ա՛յլ սիրտ եւ ա՛յլ կեանք չունեցաւ, բայց միայն Յիսուսինը:

Մարիամին դիմիր որդիական գորովալի բարեպաշտութեամբ, եւ նա քո համար կը ստանայ ուղղամիտ հաւատարմութեան եւ անձնուրաց նուիրումի շնորհը, որ փափաքում ես:

5. «Ես ոչինչ չարթեմ, ոչինչ չեմ կարող, ոչինչ չունեմ, ոչինչ եմ ... »:

Բայց Դու խաչ բարձրացար, որպէսզի ես կարողանայի իմը դարձնել Քո անսահման արժանիքները: Եւ այնտեղ հաւաքում եմ նաեւ – իմն են, որովհետեւ իր որդին եմ – արժանիքներն Աստուածամօր, եւ արժանիքները Սուրբ Յովսէփի: Եւ իմն եմ դարձնում նաեւ Սրբերի ու անթիւ անհամար վեհանձն հոգիների առաքինութիւնները ... :

Ապա, մի հայեացք եմ նետում իմ կեանքի վրայ, եւ ասում եմ. «Ա՛հ, Աստուած իմ, սա թանձր խաւարով լի գիշեր է: Միայն երբեմն երբեմն լուսաւոր ինչ որ կէտ է փայլում, Քո մեծ ողորմութեան եւ իմ սակաւ համապատասխանութեան պատճառով ... : Տէր իմ, այս ամէնը Քեզ եմ ընծայում: Ուրիշ ոչինչ չունեմ»:

ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ



ՅԻՍՈՒՍԻ ՄԱՐՄԻՆԸ
ԴՐՒՈՒՄ Է ԴԱՄԲԱՆԻ ՄԷՋ

Գողգոթային շատ մօտ, մի պարտէզում, Յովսէփ Արիմաթացին ժայռի մէջ մի նոր գերեզման էր փորել տուել: Եւ հրեաների մեծ Զատիկի նախօրէն լինելով, Յիսուսին այնտեղ դրեցին: Յովսէփն, ապա, «Ծի ծեծ բար գերեզմանի դռան առաջ որպէս կափարիչ գլորեց ու գնաց» (Մտթ 27, 60):

Առանց սեփական ոչնչի էր Յիսուս աշխարհ եկել եւ առանց սեփական ոչնչի – եւ ոչ իսկ դամբանական հանգստի վայրի – հեռացաւ աշխարհից:

Տիրամայրը – իմ Մայրը – եւ կանայք, որ Վարդապետին հետեւել էին Գալիլիայից, կատարուած ամէն բան ուշադիր դիտելուց յետոյ՝ իրենք նոյնպէս տուն են վերադառնում: Հասնում է գիշերը:

Արդ ամէն ինչ վերջացած է: Մեր Փրկութեան գործը կատարուած է: Այսուհետեւ Աստծոյ որդիներ ենք, որովհետեւ Յիսուս մահացել է մեր համար եւ իր մահով փրկագնել է մեզ:

«Քանզի գնաց գնացայք» (1Կր 6, 20). դու եւ ես թանկ գնով ենք գնուել:

Յիսուսի կեանքն ու մահը պէտք է մեր կեանքը դարձնենք: Մահանալ ընդմէջ անձնուրաց նուիրումի եւ ապաշխարութեան, որպէսզի Քրիստոս մեր մէջ ապրի Սիրոյ շնորհիւ: Ապա, Քրիստոսի հետքերին հետեւել, բոլոր հոգիների փրկագործութեանը մասնակցելու ու նպաստելու բաղձանքով:

Սեփական կեանքը տալ ուրիշների համար: Միմիայն այսպէս կարող ենք ապրել Յիսուս Քրիստոսի կեանքը եւ միայն մէկ ամբողջութիւն դառնալ Նրա հետ:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐ

1. Նիկողեմոսն ու Յովսէփ Արիմաթացին — Քրիստոսի ծածուկ աշակերտները — Նրա համար միջնորդում եմ իրենց զբաղեցրած պաշտօնական բարձր դիրքերից: Միայնութեան, ամբողջական լքումի ու արհամարհանքի պահին ... , ճիշտ այդ ժամանակ հաճարձակու՞մ էն (Մրկ 15, 43). հերոսական քաջութիւն:

Ես նրանց հետ բարձրանալու եմ մինչեւ Խաչի ստորոտը, սիրոյս հրեղէն մղումով փարուելու եմ Քրիստոսի սառած Մարմնին, դիակին ... , գամերը հանելու եմ փոխհատուցման արարքներովս եւ իմ անձնուրացութեամբ ... , փաթաթելու եմ Նրան վճիտ կեանքիս նոր վարչամակի մէջ, եւ Նրան թողելու եմ սրտիս կենդանի ժայռի մէջ, որտեղից ոչ ոք չի կարող խլել Նրան ինձնից, եւ այնտեղ, Տէր, կարող ես հանգչել:

Երբ ամբողջ աշխարհն անգամ լքի Քեզ ու արհամարհի ... , ծառայեցի՛ց, ես Քեզ կը ծառայեմ, Տէր:

2. «Դուք գիտէք, որ ապականացու արծաթով ու ոսկիով չէ, որ փրկուեցիք ձեր հայրենաւանդ ունայն ընթացքից, այլ Քրիստոսի թանկագին արեամբ» (1Պտ 1, 18-19):

Ինքներս մեզ չենք պատկանում: Յիսուս Քրիստոս մեզ փրկագնեց Իր Չարչարանքներով եւ Իր Մահուամբ: Կեանք ենք՝ Իր կեանքին պատուաստուած: Այսուհետեւ, երկրի վրայ ապրելիք միայն մի ձեւ կայ. մահանալ Քրիստոսի հետ, Նրա հետ յարութիւն առնելու համար, մինչեւ որ Առաքեալի հետ կը կարողանանք ասել. «Այլեւս ես չե՛մ որ ապրու՞մ եմ, այլ Քրիստոս է ապրու՞մ ինձնում» (Գղտ 2, 20):

3. Յիսուսի Խաչելութիւնը կեանքի անսպառելի աղբիւր է:

Երբեմն մեզնում վերանորոգ զգում ենք այն բերկրալի մղումը, որ Տիրոջն առաջնորդեց դէպի Երուսաղէմ: Երբեմն էլ, հոգեվարքի տառապանքը, որ Գողգոթայի վրայ աւարտուեց ... : Կամ էլ՝ մահուան ու մեղքի դէմ տարած Իր յաղթանակի փառքը: Բայց միշտ, Քրիստոսի Սրտի սէրը. — բերկրալի, վշտալի, փառաւորեալ:

4. Նախ ուրիշների մասին մտածիր: Այսպիսով, կ'ընթանաս երկրի վրայ, սխալներով, անշուշտ, — անխուսափելի են — , բայց բարութեան մի ակօս թողնելով:

Եւ երբ կը հասնի մահուան ժամը — եւ անխուսափելիօրէն կը հասնի — այն կ'ընդունես բերկրանքով, Քրիստոսի նման, որովհետեւ Նրա նման մենք էլ ենք յարութիւն առնելու, ստանալու համար Իր Սիրոյ վարձատրութիւնը:

5. Երբ ինձ զգում եմ ընդունակ բոլոր տեսակի սոսկալի արարքներին եւ բոլոր տեսակի սխալներին, որոնք գործում են ամենաանարգ անձինք, լաւ հասկանում եմ, որ կարող եմ հաւատարիմ չլինել ... : Այս անորոշութիւնը, սակայն, Աստծոյ սիրոյ իմ

Հանդէպ ունեցած հոգատարութիւններէց մէկն է, որն ինձ մղում է մանկան նման պինդ փաթաթուելու Հօրս բազուկներին, ամէն օր մի քիչ պայքարելով, Նրանից չանջատուելու համար:

Այսպիսով վստահ եմ, որ Աստուած ինձ Իր գրկից դուրս չի թողնի: «Մի՞թէ ծի կի՛ն ծոռանում է իր գաւակին, այնպէս՝ որ չգթայ իր որովայնից ծնունձ որդուն: Նոյնիսկ եթէ գոյութիւն ունենայ այդպիսի ծի կի՛ն, որ կարող է ծոռանալ իր գաւակին, Ես քեզ երբեք չեմ ծոռանայ», ասում է Տէրը (Ես 49, 15):

